



Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԻ. Տարի - ԱՊՐԻԼ 1937



13^{me} Année - Avril 1937

Խմբագրական

Ժամանակի սգին

Հոգ. Կեանք

Ոյժեր որ ներդաշնակութիւն յառաջ կը բերեն
Հաւատքի խորիւրդ

Շնորհաց ծովէն

Վկ սյուլթիւնս

Առանց Քեզի...

Կենաց ամուսնութիւն

Մայրս կը գանդատի Աստուծոյ առջեւ ինձ հանդէպ

Սերտողութիւն

Մեր Տէր Յիսուս Քրիստոս

Երջանիկ յոյս

Հովտին Կինը

Պատմական

Մեծ դէմքեր ու դէպքեր...

Ընտանեկան

Քրիստոնեային վկայութիւնը աշխարհի մէջ

Մանկանց սիւնակ

Հոտանքէն հտարուիլ

Սիրտ սրտի միացած

Յ. Ն. Ղ.

Վեր. Ս. Կ. Աղայապետ

Սրբուհի Մանուկեան
Վեր. Ա. Կ. Պէրպէրեան

Մինաս Յ. Պօղօպէտեան

Գ. Գ. Խաչիկեան

Թորգ. Ի. Յ. Աբրահամեան

Յ. Բ.

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերթը թէն. ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնականներն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Տշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարար կրօնական Աստուծոյ խօսքին անխաղախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բոլորի Տշմարտութեան զօրինակ
ներկայացուցիչն ալ չճանչնար ու եւ յարանումութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերթը երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարտէյի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,
ՎԵՐ. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ. ԲԻՓ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ. Պատ. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ. Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հայերէնին թարգմանութիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան
գիւրտութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՖ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու զրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելին Քրիստոսով:

|||||

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Ի —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա 20 Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման Տուար 1. 25

ԹՈՒԻՔԵՐԷՆԸ Ֆրանսա 10 Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 60 սէնթ

ՀԱՅԵՐԷՆ եւ **ԹՈՒԻՔԵՐԷՆ** միասին Ֆրանսա 25
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման Տու. 1. 75
(Դիւրութեան համար travelers check, թղթադրամ
եւ ամերիկեան նամակադրօշմ կրնայ զրկուիլ):

Թղթակցութիւններ եւ յօդուածներ զրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ իսկ զրամական առա-
քումներ ՎԵՐ. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անուռով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère


MARSEILLE (France)

Մ'անտալով գրամական առաքումի տուրիւ հաճեցէք մանտալին վրայ չմուսուլ գրելու
H. N. Ghazarossian, (Rédacteur) C. C. No. 182.53 Marseille

Արթնցի՛ր դուն
որ կը յնմանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:

Եփես. Ե. 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մտնելու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԳ. ՏԱՐԻ

ԱՊՐԻԼ 1937

ԹԻԻ 4



ԺԱՍՄԱՆԱԿԻ ՈԳԻՆ

Չենք ուզեր որ ատիկա մեր վրայ թագաւորութիւն ընէ: Ղուկ. ԺԹ. 14
Հաճէ կանխաւ կարդալ Ղուկ. ԺԹ. 11-28, եւ Խննդ. Գ. 23, 24

Այս նիւթը ընդհանրապէս այժմէական եղած է ամէն ատենուան հրապարակախօսներու եւ հրապարակագիրներու, որոնք պատեհութիւն փախցուցած չեն մատնանշելու ժամանակի տի-
րող ոգին, անոր փնտսներն ու առաւելութիւն-
ները:

Նիւթը զմեզ ալ շատ կը հետաքրքրէ, մանա-
ւանդ անոր համար որ սերտօրէն կապուած է
մեր Տէրըն զալստեան մեծ դէպքին հետ:
Առաքեալն իսկ այս ժամանակի ոգին նկատի
առնելով կ'ըսէ. «Մի կերպարանիք այս աշխար-
հի կերպարանքովը, հապա ձեր մտքին նորոգու-
թիւնովը նորոգուեցէք: Ժամանակը ծախսու առէք,
վանդի օրերս չար են: Ուրեմն ժամանակի հո-
գին չար է: Ասիկա թէ եւ ներկայիս ընդհանուր և
ցցուն երեւոյթ մը ստացած է, այսու ամենայնիւ
նորութիւն մը չէ: Անոր բունը ի հնուց՝ մարդու-
թեան ցեղի արշալոյսին իսկ արմատներ ար-
ձակել կ'սկսէր Կայէնի որդւոց, մարդոց որդինե-
րուն սերունդին մէջ:

Ղուկասու Աւետարանին վերոյիշեալ հատուա-
ծը երբ կարգանք, կը տեսնենք պարզապէս թէ
մեր Տէրը այս առակը իր զալստեան մասին կը
խօսէր: Ազնուական մարդ մը հեռու երկիր գնաց՝
իրեն թագաւորութիւն առնելու եւ գալու: Այս ազ-
նուականը բուն իսկ ինքն է: Կա՞յ ու կարելի՞ է
գտնել Անկէ աւելի ազնուական, զոր յանդիմա-
նելու համար տիեզերքի մէջ մէկը պատճառ մը
ունենայ: Հայրն Աստուած ըսաւ, Ատիկա է իմ
սիրելի Որդիս, Որուն հաւնեմ եմ: Եկեղեցին կ'ը-
սէ Անոր համար, ինչպէս է (պտղատու) խնձորե-
ղին (վայրի) անտառի ծառերուն մէջ, այնպէս է

իմ սիրականս երիտասարդներուն մէջ: Ասիկա հե-
ռու երկիր գնաց, որպէս մեր փաստաբանը մեզի
համար բարեխօսելու, իր թագաւորութիւնը պատ-
րաստելու ու թագաւորական փառքով աշխարհ
գալու: Տէրը պիտի գայ, բայց այս անգամ ո՛չ թէ
Բեթլեհէմի մտերին մէջ կրկին ծնանելու և կամ
իր զլուխը դնելու համար տեղ մը չունեցողի
պէս, հապա պիտի գայ որպէս մեծ յաղթականը,
երկնի ու երկրի յաղթականը որուն առջեւ ոչ
մէկ բան կրնայ դիմանալ — Տէր, գիտէի թէ Դուն
խիստ մարդ մըն ես — Անոր առջեւ նախապէս
ծաղը ընող ամբարիշտներ պիտի ազաղակեն,
Լեռնե՛ր մեր վրայ ինկէք, բլուրնե՛ր մեզ ծածկե-
ցէք, Անոր ահաւոր երեսին առջեւէն ո՛ւր փախ-
չինք:

«Բայց անոր քաղաքացիները զանիկա կ'ատէ-
ին, ու դեսպաններ զրկեցին Անոր ետեւէն ըսե-
լով, չենք ուզեր որ ատիկա մեր վրայ թագաւո-
րութիւն ընէ»: Չենք ուզեր ըսին Անոր քաղաքա-
ցի Հրեաները, «Մենք կայսրէն գատ թագաւոր
չունինք»: «Խաչը հանէ Ատիկա, խաչը հանէ»: Չենք
ուզեր Տէրը և Անոր Օծեալը, «Կոտորենք ա-
նոնց կապերը, մեզմէ ձգենք անոնց լուծը»: Չենք
ուզեր զԱնիկա, Բարրաբան արձակէ մեզի: Եւ
Բարրաբա աւագակ մըն էր:

Ի՞նչ յատկանշական պարագայ է այս: Չէ թէ
միայն չենք ուզեր զԱնիկա, հապա ուրիշը. կ'ու-
զենք հնազանդիլ, բայց ոչ Անոր հրամաններուն,
կ'ուզենք ծառայել, բայց ոչ Անոր: Անոր լուծը
ծանր եւ անպատուաբեր կուգայ մեզի, Անոր
պատուիրանները անգործադրելի, Անոր հպատա-
կութեան պայմանները սաորնացուցիչ, Անոր

ցոյց տուած ապրելակերպը նեղ, Անոր ապրած սուրբ կեանքը մեզի պփղալի, ուրեմն գայթակղեցուցիչ եւ յիմարական: Այս պատճառաւ մենք ազատ ըլլալ կ'ուզենք, Անկէ ազատ՝ ծառայելու մեր կամքին, հետեւելու մեր կիրքերուն ու ցանկութեանց, զմեզ խողտեցնող զգացումներուն: Կ'ուզենք ընել զմեզ շլացնող զործեր միայն, ապրիլ մեր հաճոյքին համար: Ուտենք ու խմենք, վասնզի վաղը պիտի մեռնինք եւ գերեզմանէն անդին ոչնչութիւն: Այսպէս կ'ուզենք եւ ոչ ուրիշ կերպ: Ձեռք ուզեր անդի կեանքը: Յաւիտենականութիւնը մեզի ձանձրոյթ պատճառող ժամանակաշրջան մըն է, անոր վրայ չենք ուզեր խորհիլ, չենք ուզեր նոյնիսկ Աստուծոյ վերայ խորհիլ, աշխարհի գահերը վար առինք, կը մնալ երկինքինը, զայն ալ վար պիտի առնենք:

«Ձեռք ուզեր որ Ատիկա մեր վրայ թագաւորութիւն ընէ»։ Այս է քաղաքական աշխարհի և նոյնիսկ կրօնական կոչուող շատ մը հոսանքներու իւրաքանչիւրին ըսածը, Ազգերու Դաշնակցութենէն սկսեալ մինչեւ ամենապզտիկ կառավարութեան պաշտօնեան, Պօլշեիկին վեր ցըցուած բոունցքը և ֆաշիստին դէպի առաջ բարձրացած բազուկը նոյնը կը կրկնեն: Կարմիր դրօշակէն սկսեալ մինչեւ կեռ խաչը կամ հրեղէն խաչը նոյն արտայայտութիւնը ունին: Ձեռք ուզեր: Աստուծոյ թագաւորութեան օրէնքները հակասական կուգան իրենց շահերուն, ուրեմն անընդունելի և մերժելի են անոնք իրենց Օրէնսդիրին հետ միասին:

Վերը յիշեցինք թէ այս հոգին նոր չէ, անոր արմատները շատ հեռուն պիտի տանեն զմեզ, մեր կարծածէն աւելի հեռու, մանաւանդ երբ կարդանք Ծննդ. Դ. գլուխը — մարդկային ցեղի արշալոյսի պատմութիւնը: Հոն կը տեսնենք մարդուն անկման հետեւող ամենէն ողբերգական պարագաներէն մին: Կայէն մեղսուցած է իր եղբայրը, առաջին մարդասպանութիւնը տեղի ունեցած է: Աստուած այդ մեղքին ահարկու հետեւանքները ցոյց կուտայ Կայէնին որ իր կողմէ բոլորովին ընկճուած իր մեղքին բացած անդունդին առջեւ, անյուսութեան մատնուած է: Բարին Աստուած իր մարդասիրութեամբը խիստ օրէնքով մը արդիւնեց մարդասպանութիւնը. «անկէ եօթնապատիկ վրէժ առնուի»: Հակառակ որ Կայէն արժանի է մահուան, սակայն Տէրը չուզեր որ մարդու ձեռքով արին թափուի, քանզի Աստուած իր պատկերին պէս ստեղծեց մարդը Ծննդ. Թ. 5, 6: «Վրէժ ժխնդրութիւնը իմն է, ես պիտի հատուցանեմ

կ'ըսէ Տէրը»: Մարդասպանութեան եւ վրէժխնդրութեան դէմ Աստուծոյ տուած երաշխիքը խիստ ծանր կուգար Կայէնի սերունդին, երբ մանաւանդ անոր յաջորդ սերունդին քաղաքակրթական յառաջդիմութիւնը կը տեսնենք ճարտարագիտութեան, երաժշտութեան, մեքենականութեան, ճարտարարուեստի եւայլնի մէջ: Եւ ահա թոփէլ Կայէնի հայրը Ղամէք, որ չարութեան ճմարիտ պատկեր մըն է, իր որդւոյն շինած պատերազմական զործիքը թերեւս սուրը կը զործածէ սպաննելով մարդ մը (երիտասարդ) զինքը հարուածով մը վիրաւորած ըլլալուն համար: Մարդկային սերունդի ինչ վատասեռում:

Ուշադրութեան առնենք թէ այս հեթանոսական երգը որ Ղամէք կ'երգէ իր երկու կիներուն, որ աւանդութեամբ մինչեւ Մովսէսի հասած էր, երկու կարեւոր կողմեր ցոյց կուտայ: Առաջին՝ Ղամէք Աստուծոյ հակապատերազմական եւ հակամարդասպանական պատուէրը առ ոչինչ կը համարի: Անիկա Աստուծոյ հեղինակութիւնը չուզեր ճանչնալ մարդկային ցեղի վրայ, այլ կը դիմէ բուն իսկ իր դատողութեան եւ բազուկին, հակառակորդին ընելու ինչ որ պէտք է և կ'ընէ, բնորոշած պզտիկ վէրքին փոխարէն վայրագօրէն սպաննելով զայն: Երկրորդ՝ Ղամէք գէնքի զործածութիւնը և անով յաղթելը իրեն փառք կը սեպէ: Ուրեմն ինչ մեծ դափնիներու պիտի արժանանար Ղամէքի այն ազգականը որ զայն սպաննողին ընտանիքէն եօթնասուն եւ եօթը հոգի սպաննած ըլլաւ: Ձէնքի աստուծոյն ինչ մեծ փառք: Ինչ ահարկու անկում եւ վատասեռում: Մեղքը որքան շուտով խմորած էր մարդկութիւնը այն ստեն, իսկ այսօր խնդրոց երևոյթը տարբեր չէ բնաւ: Մարդիկ խաղաղութիւն կը քարոզեն, բայց ձեռքերնին հրացանի բլզակին վրայ զրած: Այս է մարդուն ուզած խաղաղութիւնը որուն պտուղը միայն արին հեղութիւն պիտի ըլլայ: Այս օրերուն ալ ամէն ազգի մէջ սուրը որքան կը փառաբանուի: Մտիկ ըրէք Եւրոպայի երկիրներուն նախարարաց ճառերը: Տէրը ասանկներուն կ'ըսէ, «Որդին համբուրեցէք որպէսզի չբարկանայ ու ճամբուն մէջ չբէրսուիք»: Ազգերու և անհատներու փրկութեան համար միայն մէկ ճամբայ կայ — Յիսուս Քրիստոս, քանզի Անկէ զատ ուրիշ անուն մը չկայ երկինքի տակ գտնուած, մարդոց մէջ տրուած որով կարող ըլլանք փրկուիլ:

Թօլստոյ, մեր ընթերցողներուն ծանօթ ուս



ՈՅԺԵՐ՝ ՈՐ

ՆԵՐՊԱՇՆԱԳՈՒԹԻՒՆ

ՅԱՌԱՋ ԿԸ ԲԵՐՆԵ

(ՓԻԼ. Բ. 1, 2)

Քրիստոնէական միութիւնը չնմանի մարդու մը մօրթին, որ երեսէն ամբողջութիւն մը կը ներկայացնէ. անիկա կենսական հոգեւոր արեւակցութիւն մըն է: Քրիստոնեաները ոչ թէ միեւնոյն արիւնը՝ այլ միեւնոյն սիրտը կը կրեն: Ուրեմն երբ Առաքեալը քրիստոնեաներուն դիմում կ'ընէ խաղաղութեամբ եւ միաբանութեամբ ապրելու՝ անոնց առջեւ կը դնէ այն խորունկ ճշմարտութիւնները, որոնցմով ծնած են եւ որոնցմով միայն կրնան սնուցուիլ:

«Ուստի եթէ Քրիստոսով միութարութիւն մը կայ»: Ահա հոգեւոր ներդաշնակութեան հիմը: Ամէն բանէ առաջ անձնական հոգեւոր փորձառութիւն մը եւ Տէրոջը գիտութիւնը ըլլալու է, որպէսզի անոնցմով քրիստոնեայ անհատը խըրատուի: Այդ կարգի փորձառութիւն մը միայն կարող է համոզիչ ճարտասանութեան մղիչ ոյժը գործածել անոր վրայ: Ասկէ դուրս ռեւէ ուրիշ հիմի վրայ քրիստոնէական միութիւն մը հաստատուելու ջանքը կը նշանակէ աւագի վրայ կառուցանել: Սովորական ծէսերը աւագակոյտեր միայն կը ներկայացնեն, որոնք հակառակութեան սաստիկ հովերէն կը ցրուին ու երեւութական միութիւնը սարսափելի խառնակութեան կը վերածուի: Սովորական կազմակերպութիւնները մեքենականութիւններ են որոնք անզազար ենթակայ են ժամանակի ժանգոտման ու բազմաթիւ զօրեղ թշնամիներու ազդեցութեան: Եւ ընդհանրական հաւատոյ հանգանակ մը՝ նախապաշարման կողմաններով եւ ամենաբոլորն եռանդով իսկ բոլորովին անկարող է մեր Տէրոջը նպատակին համաձայն ընտանիք մը յառաջ բերել: Այս ամէնը սոսկ երեւութային միութիւններ են ու փառաւոր իրականութեան նմանութիւնները միայն: Եղբայրական ներդաշնակութեան առաջին պահանջը անհատի մը եւ իրեն Փրկչին միջեւ գոյացած զաղտնիք մը, «պահուած մանանայէն» ճաշակել մը եւ կեանքի ամենէն ներքին ու լոկկ սենեակներուն մէջ կատարուած ստիպողական ու սփոփիչ խօսակցութիւն մըն է:

«Եթէ սիրոյ սփոփանք մը»: Այն հոգին որ Աստուծոյ ճոխ խնճոյքին մասնակցած ու ճաշակելով տեսած է թէ որչափ բարի է Տէրը՝ անտարակոյս ամենատիպողական սիրոյ մը մղում մը կ'զգայ իր մէջ: Սէրը ոչ թէ փոքրիկ հնազանդութեանց արգիւնքը՝ այլ մեծ հաղորդակցութեան ու ընկերակցութեան մը ծնունդն է: Մենք կը սիրենք, վասնզի առաջ Անիկա մեզ սիրեց»: Ոչ ոք կարող է սիրոյ զաղտնիքը բացատրել: Անիկա երբեք չկրնար ստուգուիլ: Հոգիին այն վիճակն է երբ անհասկնալի կրակը կ'սկսի բռնկիլ: Վայրկեանէ մը մութ ու պաղ եւ սովորական երեւոյթը կը վերածուի լուսապայծառ, գունագեղ երեւոյթի մը ու մթնոլորտը կը լեցուի երգերու արձագանգով: «Հիները անցան եւ ահա ամէն բան նոր եղաւ»: Երբ սէր կը ծնի հոգեւոր մէջ, մարդուն բազկերակը կ'սկըսի նոր կեանքով բախել ու նոր ուժէ մը մղուած կ'երթայ իր եղբայրը գտնելու:

«Եթէ հոգիի հաղորդակցութիւն մը»: Սէրը հոգեւոր գործարանն է, որուն միջոցով ընտիր հաղորդակցութեան կը մտնենք Յաւիտեանականին հետ: Անթել հեռագրի մը լուրը զրկող եւ զայն ընդունող գործիքները ձայնի միեւնոյն տեսակով պատրաստուած ըլլալու են: Եթէ այս նմանութիւնը կորսուի՝ հաղորդակցութիւնը կ'ընտանգուի: Սէրը Աստուծոյ հետ հաղորդակցութեան զգացումն է եւ ուր որ անիկա գերբնական ուժով կը տիրէ, հոն գոյութեան կուգայ հրաշալի յարաբերութիւն մը Աստուծոյ հետ. յարաբերութիւն մը, որուն մէջ հոգին առանց հաղորդակցութեան միջոցներու իսկ, ճիշդ միեւնոյն վայրկեանին կը խորհի ինչ որ Աստուած ճիշդ այդ վայրկեանին կը խորհի: Աստուած կը խօսի ու մենք մտիկ կ'ընենք: Մենք կը խօսինք ու Ան կը լսէ եւ մեր մէջ խնդրանքներու եւ ակնկալութիւններու անվերջ ու սուրբ փոխանակութիւն մը տեղի կ'ունենայ: Դուրսը գտնուողներէն թերեւս բոլորովին ծածկուած է այս նուիրական հաղորդակցութիւնը, ինչպէս անթել հեռագրի լուրերը ծածկուած են դուրսիներէն. սակայն բոլոր անոնք որ Աստուծոյ հետ ներդաշնակուած են, գիտեն այս մեծ իրականութիւնը ու կը ցնծան այս շնորհալի փորձառութեամբ: Ոչ ոք կրնայ այսպէս զաղտնի ու անվերջ յարաբերութեան մէջ գտնուիլ Ս. Հոգիին հետ՝ առանց սիրով ու քաջութեամբ ուրիշներու ետեւէ երթալու մղումը զգալու: «Աստուծոյ բարեկամը» կարօտը պիտի քաշէ Անկէ հեռու գտնուող առանձին

անհատներու համար եւ մաքսաւորներու ու մեղաւորներու բարեկամը պիտի ըլլայ:

«Եթէ պիտութիւն ու ողորմութիւն մը»: Այո, անիկա ամենայն փափկութեամբ պիտի մօտենայ մարդոց տկարութեանց... վէրքերուն: Պիտի կանգնեցնէ յոգնածները ու ամենասուրբ փափկանկատութեամբ դպչի անոնց վէրքերուն: Անոր արգահատանքը զարմանք պիտի պատճառէ զայն ընդունողներուն ու զանոնք պիտի փրկէ: Ոչինչ այնքան անհրաժեշտ է աշխարհի վրայ, որքան լուսաւորումը կարեկցութեան այսպէս ընտիր սրտգեւ մը: Մեզմէ շատեր կ'ընան լալ, սակայն մեր արտասուքներուն մէջ «լոյս» ու «աչք» չըկան: Այն կարեկցութիւնը որ կ'որ չէ, ալ «աչքերով լեցուն» խիստ հազուագիւտ է, բայց օրհնեալ ու հզօր ծառայութիւններ կը մատուցանէ: «Եւ այս աղօթքը կ'ընեմ, որ ձեր սէրը հետզհետէ աւելի շատնայ պիտութիւնով ու բոլոր ընտրողութիւնով»: Բոլոր անոնք որ Տէրոջը հետ մըտերիմ յարաբերութեան մէջ են՝ անատրակոյս ունին այս ամենատես գործով: Եթէ անոր մէջ կենանք, մեր ամբողջ մարմինը լոյսով կ'ոլորուի:

«Իմ ուրախութիւնս դուք լեցուցէք»: Արդէն քիչ մը ուրախացուցած էին առաքեալը, սակայն հիմա կը խնդրէ որ իր ուրախութիւնը կատարեալ ու զեղուն ընեն: Ասով ըսել չուզեր թէ իր Տէրոջմով ունեցած ուրախութիւնը ճշգրիտ ու ջրնջին էր: Ոչ, այդ ուրախութիւնը յորդահոս գետի մը նման էր եւ ամէն արգելք կ'ը քշէր կը տանէր: Բայց մեր Աստուծով ունեցած ուրախութեանէն դուրս ուրիշ ուրախութեան ջրանցք մըն ալ կայ որ միայն մեր ընկերակիցներուն կողմէն կրնայ լեցուիլ մասնաւոր պայմաններու տակ: Աստուած որոշած է որ մարդկային երջանկութեան ջրանցքները լեցնելու դործին մէջ մարդիկ իրեն հետ բաժին ունենան եւ միմիայն մարդոց անհրաժեշտութեան եւ հարեանցիութեան պատճառաւ է որ այդ ջրանցքները երաշտութեան ժամանակ դամբած գետակներու նման պարապ կը մնան: Սակայն եթէ Փիլիպպեցիները Պօղոսի հոս նկարագրած փորձառութիւնները վայելած էին, անոնք ամէն հանգամանք ունէին յորդեղու աստիճան լեցնելու մարդկային երջանկութեան ջրանցքը: Եթէ իրենց սիրտերուն մէջ ճանչցած էին Տէրը, եթէ սէրը իրենց մէջ ծնունդ առած էր ու կը զործէր, եթէ գործակի մտերմութիւն կը մշակէին Ս. Հոգւոյն հետ ու լեցուած էին ամենազգալիկ կարեկցութեամբ, անպատ-

ճառ անոնց կեանքը ցնծութեամբ եւ ուրախառիթ հեղեղներով պիտի ողողէր ուրիշներուն ալ կեանքը: Առաքեալին նկարագրած այս առատ աղբիւրը ճիշդ անոր պատկերացուցածին նման պիտի գործէ քրիստոնէական եկեղեցիին մէջ ու արդիւնքը պիտի ըլլայ փառաւոր համերաշխութիւն մը:

«Նոյն խորհուրդը ունեցէք»: Այս համերաշխութեան շնորհալի յատկանիշներն են՝

Ա. Ընկերակցութիւն մը՝ յառաջ եկած միեւնոյն սիրոյ առարկայէն ու ոչ թէ միեւնոյն ատելութեան առարկային շուրջ: Ընկերակցութիւն մը գոյութեան եկած ոչ թէ բացառականօրէն միեւնոյն թշնամիին դիմադրելով՝ այլ զրականօրէն Տէրոջը հանդէպ միեւնոյն սիրով լեցուած ըլլալով, «միեւնոյն սէրը ունենալով»:

Բ. Համաձայնութիւն մը՝ որուն ամէն սէր ու գործով կատարելապէս ներդաշնակ են եւ զգացումները իրարու կը գործակցին զօրաւոր՝ բայց նաեւ քաղցր ու ներդաշնակ երաժշտութեան մը նման: «Մէկ շունչ»:

Դ. Համերաշխութիւն մը՝ բուսաւորում ու վարում միեւնոյն նպատակէն: Եղբայրութեան ամէն մէկ գործունէութիւնը միեւնոյն մեծ ու գերիշխան նպատակը ունենալու է: «Մէկ մըտածմունք»:

Ահա Տէրոջը հետ թագուն փորձառութենէ ծնած հզօր համաձայնութիւնը:

ՀԱՒԱՏՔԻ ԽԱՐԻՍԽԸ

ooo

Բայց Անիկա գիտէ իմ ճամբս, երբ զիս փորձէ, ոսկիի պէս պիտի ելլեմ: Յոր. ԻԳ.10

Այս խօսքերը տառապիւ հաւատացեալի մը խօսքերն են: Յոր իր ստացուածքէն զրկուած, զաւակները կորսնցուցած, մարմնով զարնուած, ցաւերու եւ վիշտերու մէջ ընկղմած վիճակի մէջն էր:

Իր բարեկամները փոխանակ իրեն օգնելու, անոր տառապանքները աւելի շատցուցին իրենց սխալ փիլիսոփայութիւններով եւ անխոհմ խօսքերով: Յոր իր յոյսը Աստուծոյ վրայ դրած Անկէ կ'նպասէր իր փրկութիւնը: Այս խօսքերէն կ'իմանանք թէ անիկա մտային նեղութիւն ունէր, բայց սրտի խաղաղութիւնով կը յաղթէր այս նեղութեան:

Անոր մտային նեղութիւնը այս էր: Աստուծոյ

նախախնամութեան կը հաւատար, բայց չէր գիտեր թէ իրեն համար այն նախախնամութեան գաղտնիքը կամ նշանակութիւնը ի՞նչ էր:

Իր փորձութեան եւ անտանելի տառապանքներուն պատճառը ի՞նչ էր: Եթէ իր մեղքն էր, ինչպէս որ անոր բարեկամները կը պնդէին, ի՞նչ էր այն որոշ մեղքը որ Աստուծոյ բարկութիւնը իր վրայ հրաւիրած էր:

Ամէն կողմ կը դառնայ, կը քննէ, հասկնալ կ'ուզէ թէ արդեօք ուրիշներէն աւելի մեղաւոր ըլլալուն համար է որ այս բոլոր փորձութիւնները անոր վրայ եկած են: Աստուծոյ նպատակը ի՞նչ է այս տառապանքներուն միջոցաւ:

Այս վիճակին վերջաւորութիւնը անորոշ էր. բոլորովին պիտի ազատէ՞ր, ե՞րբ պիտի ազատէր, կամ ի՞նչ կերպով: Ասոր համար ոչ լոյս, ոչ ալ նշան մը ունէր:

Անիկա կ'ըսէ, հասկնալ կ'ուզեմ իմ անձիս համար Աստուծոյ նախախնամութեան ի՞նչ ըլլալը: Կ'ուզեմ գիտնալ թէ ի՞նչ պատճառ տուած եմ այս տառապանքները քաշելու համար: Գոնէ այս կէտը որոշ գիտնալ կը փափաքեմ թէ այս տառապանքները որչա՞փ պիտի տեսնեմ, եւ եթէ պիտի վերջանան, ե՞րբ կամ ի՞նչ ձեւով...: Այս կէտերը հարցնելու համար զինքը կը փնտռեմ: «Ի՛նչպիսի արեւելք կ'երթամ ու Անիկա չեղեմար, եւ զէպի արեւմուտ ու զԱնիկա չեմ նշմարեր, զէպի հիւսիս կ'երթամ ուր ինք կը գործէ, բայց զԱնիկա չեմ կրնար գիտել, հարաւային կողմը կը պահուի ու չեմ կրնար տեսնել զԱնիկա»: Ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ կը տառապիմ, չեմ գիտեր... Բայց պէտք չէ գիտնալ, կրնամ հաւատալ, կըրնամ վստահիլ Ասոր, «Թէեւ Անիկա զիս սպաննէ, եւ Ասոր պիտի յուսամ»: «Գիտեմ որ իմ Փրկիչս որչա՞նչ ու Անիկա վերջին ժամանակը պիտի ելլէ երկրի վրայ»: Եթէ եւ զԱստուած չեմ կրնար տեսնել, Անիկա զիս կը տեսնէ: Եթէ եւ չեմ կըրնար տեսնել այն ճամբան որուն կ'առաջնորդէ զիս, Անիկա զիս գիտէ զայն եւ ասիկա կը բաւէ: Ես սրտի խաղաղութիւն ունիմ: Աստուած զիս փորձութեան հալոցին մէջ դրած է: Երբոր կրակը իր գործը լրացնէ, ես ոսկիի պէս պիտի ելլեմ:

Յոր այս անտանելի տառապանքին մէջ Աստուծոյ Հոգւոյն կրթութեան մէջն էր: Իր ցաւերուն մէջ գիտէր թէ Աստուծոյ ձեռքին մէջ է: Անոր ձեռքը զինքը կը շարժէ, սակայն հոգ չէ, շարժողը Աստուծոյ ձեռքն է:

Գիտէ որ ոսկին միշտ կրակով կը մաքրուի եւ կը գտուի: Գիտէ թէ ճշմարիտ ոսկին կրակի կը դիմանայ, այլուողը մետաղի կղկղանքն է:



ՎԿԱՅՈՒԹԻՒՆՍ

1931ի վերջերը, չեմ յիշեր վերստին ծննդեանս ճիշդ թուականը, պայծառ առաւօտ մ'էր, երբ քունէս արթննալով սկսայ զղջման արցունքներ թափել: Սակայն հին մեղաց կեանքիս մէջ էի դեռ: Եւ երբ սիրտս Յիսուսի յանձնելու կը վաւանէի, յանկարծ թաքուն ոյժ մը զգացի որ զիս Կ'ողողէր: Հրաշքը կատարուեցաւ:

Ո՛հ, ինչպէս բացատրեմ վերստին ծննդեանս փորձառութիւնը: Տէրը աղօթքիս պատասխանեց եւ իր ձրի փրկութիւնը ինծի պարգեւեց: Ներքին վիշտերս ալ անհետացան: Յանցանքներուս թողութիւն շնորհուեցաւ, զի Յիսուս իր քաւարար արեամբը լուաց, մաքրեց զիս իմ բոլոր մեղքերէս: Փառք ուստի Տէրոջս, հազար անգամ: Սիրտս անհուն ուրախութեամբ լեցուած է: Նոր խաղաղութիւն մը ունիմ եւ սրտիս մէջ, որ առաջ երբեք ճանչցած չէի: (Յովհ. ԺԴ. 27):

Աստուծոյ զաւակները փորձութեան մէջ զըտնուած աստիճան երեք բաները լաւ գիտեն:

1. Միայն կը փորձուին, ուրիշ բան չէ, վտանգ չկայ, եթէ արթուն են, հաւատքի փորձ է ան:
2. Բաւական փորձուելէ յետոյ հալոցէն մաքրուած պիտի ելլեն:
3. Ոսկիի պէս դուրս պիտի դան, աւելի մաքուր եւ մաքրողին աւելի թանկագին ու ծառայութեան աւելի յարմար:

Եթէ մէկը հալոցին մէջ իբր ոսկի կը մտնէ, անտարակոյս անկէ ոսկի պիտի ելլէ եւ աւելի մաքուր ոսկի:

Սփրճըն կ'ըսէ, «Տառապանքի ծովէն եկող օղը տկար քրիստոնեաներուն օգտակար է: Շարունակ յաջողութիւններ տաք օդի պէս ջիղերը կը թուլցնեն եւ ոսկորները կը կակուղցնեն: Բայց տառապանքի ցուրտ հովերը մեզ կ'ամուրցնեն: Զի կտորած յաջողութիւններ շնորհքները անտես ընելու կը փորձեն մեզ եւ այն շնորհքները պարգեւողը կը մոռցնեն. սակայն արեւէն ետ քաշուող ճառագայթները մեզ կ'առաջնորդեն արեւին նայելու»:

Հալէպ

(Վեր.) Ս. Կ. ԱՂՊԱՊԵԱՆ

Եթէ տակաւին նուիրուած չես Յիսուսի սիրելի ընթերցող եւ անտարբեր եւ փրկութեանդ մասին, հիմա Անոր դիմէ, ճիշդ հիմա, զի չես գիտեր վաղը քեզի ինչ կրնայ պատահիլ:

«Ուստի ինչպէս կ'ըսէ Հոգին Սուրբ, այսօր եթէ Անոր ձայնին պիտի լսէք, ձեր սիրտերը մի խտացնէք, բարկացնելու ատենին պէս անատին մէջ փորձութեան օրը» Եբր. Գ. 7, 8:

«Ահա հիմա է ընդունելի ժամանակը, ահա հիմա է փրկութեան օրը» Բ. Կոր. Զ. 2:

Լոս Անճէլոս ՍՐԲՈՒՀԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԱՌԱՆՑ Քեզի...

Մէրըս սիրող, հոգիս Հոգւոյդ մի խորան,
Կ'ուզեմ վառել զիս Գու մէջ խունկի նըման,
Կեանքի գաղտնիքը ո՛վ... Ամենակարող,
Առանց Քեզի լուծել երբեք չեմ կարող:

Սիրտըս սիրով է միշտ լեցուն, չէ թափուր,
Կ'ուզեմ սիրել ամէն ոք ջերմ, սիրակուռ,
Բայց անոնք որ զիս չեն սիրեր, են ոսոխ,
Առանց Քեզի սիրել երբեք չեմ կարող:

Ունիմ սիրտըս, հոգիս կրծող մեղքեր վատ,
Որ կեանքիս խորքին մէջ կ'աճին միշտ ազատ,
Կ'ըզձամ, կ'ուզեմ ըլլալ ես ձիւնէն մաքուր,
Բայց առանց Քեզի անկարող եմ, ո՛վ Ս. Հուր:

Պարտականութեանս բեռան տակ նըկուն,
Կըքած եմ որպէս եղէկ մ'աղագուն,
Կ'ուզեմ բլոնել ճամբան՝ երկինքը տանող,
Բայց առանց Քեզի, ո՛հ, շարժիլ իսկ չեմ կարող:

Թող մի տար որ առանց Հոգւոյդ ելլեմ բեմ,
Ու գոռամ այս ու այն խօսքեր թեր ու դէմ,
Մարդ եմ, Մենտորս եղիր, ով Հոգի սիրող,
Առանց Քեզի՝ Քեզ քարոզել չեմ կարող:

Առանց Քեզի ոսկի, արծաթ գանձ թաքուն,
Հրապոյր չունին ինձ համար, չեն սիրուն,
Այս կեանքը անուշ է, հմայք մը գերող,
Սակայն առանց Քեզի ապրիլ չեմ կարող:

Ո՛հ, չեմ ուզեր առանց Քեզի մտնել հող,
Երկինքս փոխել զըթովքին հետ բորբ այրող,
Եթէ կ'ուզես կանչէ, ա՛ռ զիս ալ ո՛վ Տէր,
Բայց կ'աղաչեմ, ո՛հ, զիս Քեզմէ մի գատեր:
(Վեր.) Ա. Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ



ՄԱՅՐՍ ԿԸ ԳԱՆԳԱՏԻ

ԱՍՏՈՒԾՈՅ ԱՌՋԵԻ

ԻՆՁ ՀԱՆԴԷՊ

Քարոզիչ մը օրին մէկը կանչուեցաւ որ մօտակայ մահամերձին տունը երթայ եւ անոր օգնական ըլլայ հոգեվարքի պահերուն, զայն հոգեւորապէս պարագանելով:

Ծերունի մահամերձը համեստ սենեակի մը մէկ անկիւնը իր անկողինն մէջ պառկած էր, իսկ չորս աղջիկներն ու մէկ որդին անոր սնարին քովը ծնրադիր կուլային: Խօսակցութեան մէջ քարոզիչը հարցուց թէ մահամերձը դեռ իր սրտին վրայ ծանրացող խնդիր մը ունէ՞ր, ունէ՞ր ոեւէ թշնամութիւն մը որ մինչեւ հիմա կը շարունակուէր, կամ եղա՞ծ էր գժտութիւն մը ունէ մէկուն հետ, կամ կա՞ր մէկը որուն հանդէպ դեռ ըսելիք ունէր, որուն չէր կրնար ներել:

— Ո՛հ, սիրելի քարոզիչ, ոեւէ բան մը չունիմ, ամենուն ալ ներած եմ: Այս խօսքին վրայ հինգ զաւակները սկսան աւելի ուժգին եւ դառնապէս լալ: Խօսակցութեան մէջ հասկցայ թէ կինը ուրիշ զաւակ մըն ալ ունէր որ մօտակայ գիւղերէն մէկուն մէջ իբր գործաւոր ծառայելու գացած էր: Առաջին ատենները կանոնաւորապէս թղթակցած եւ զրամ ալ զրկած էր մօրը, բայց վերջին ատենները այլեւս զաղրեցուցած էր իր յարաբերութիւնը, սկսած ըլլալով անպարկեշտ յարաբերութեանց: Երբ մայրը սիրով յանդիմանած էր զայն, ինքն ալ բարկացած, ցատուով մէկդի հրած եւ հատ մըն ալ զարկած էր իր մօրը:

Երբ քարոզիչը հարցուց մօրը թէ արդեօք իր որդւոյն ներած էր այս անիրաւութիւնը, «Մայր մը ներելէն զատ ի՛նչ կրնայ ընել, բայց ես գիտեմ որ Տէրն ալ ներած է» պատասխանեց ծերունին բոլորովին վստահ շեշտով մը, քանզի այն խնդրուածքը որուն այնքան արցունք խառնուած է, չկրնար մերժուիլ:

Կարճ ժամանակ մը վերջը ծերունի կինը մեռաւ եւ ահա եկաւ թաղման օրը: Մեռեալին դիակին շուրջ հաւաքուած էին անոր վեց զաւակները, անառակ որդին ալ: Անիկա չէր լար, բայց իր աչքերը սեւեռած էին մօրը պաղ եւ բիրեղացած աչքերուն: Դազաղը վերցուեցաւ և յուզարկաւորները տարին զայն գերեզման: Զա-

ւակները կը հետեւէին իրենց մօրը, անոր վերջին յարգանք մըն ալ մատուցանելու: Պատշաճ յուզարկաւորական արարողութենէն յետոյ, երբ հրաման կը արուէր հողը լեցնելու, յանկարծ խուլ ձայն մը բարձրացաւ անառակ սրդիէն, որ միեւնոյն ատեն ցատկած ըլլալով մօրը գերեզմանը, ինկած գրկած էր անոր դագաղը, աղաղակելով շեշտակի եւ որոշ ձայնով, «Մայրս կը գանգատի Աստուծոյ առջեւ ինձ հանդէպ»: Քանի մը երիտասարդներ վար իջան եւ վերցոյցին Քրիստեանը, որ սակայն բոլորովին թուլցած, չէր կրնար նոյնիսկ իր ոտքերուն վրայ կենալ: Թաղումէն յետոյ քարոզիչը առաւ զայն եւ մտաւ եկեղեցւոյ մէկ քննեակը եւ անոր հաղորդեց իր մօր խօսքերը, որոնք բոլորովին վստահացուցած էին զայն թէ մայրը ներած էր եւ ուստի Աստուծոյ առջեւ չէր կրնար գանգատիլ իրեն դէմ: Ոչ միայն այդքան, հապա անիկա բոլորովին վստահ էր թէ Տէրը իր ազօթքը պիտի լսէր իր սրդույն մասին եւ Աստուած պիտի ընդունէր անառակը իր սուրբ հանգստեան մէջ: Ուրեմն պէտք չէր մտածել գանգատին վրայ, հապա փրկութեան ճամբուն վրայ:

Ի՞նչ ովկէանոս է մօր սիրտը: Մարդ չհասկնար զայն, բայց միայն ինքը: Հոն կայ ովկէանոս սէր: Սակայն քանի՜ հազարաւոր երիտասարդներ կը պտըտին այսօր ծանրաբեռնուած խղճմտանքով մը, վասնզի իրենց մօր շինջ եւ անձնագոհ սիրտը անարգած եւ մայրական փափուկ զգացումները վիրաւորած եւ ոտնակոխած են: Ա՛հ, ի՞նչ զզուելի եւ վարշահոտ է ապերախտութիւնը, արնալ մօրն հանդէպ: Աստուծոյ խօսքը կ'ըսէ, «Այն աչքը որ իր հայրը ծաղր կ'ընէ եւ իր մօրը հնազանդիլը կ'անարգէ, ձորերուն ազուանները պիտի փորեն ու գանիկա արծիւներուն ձագերը պիտի ուտեն»: Ու օրէ օր աւելի իրականացած կը տեսնենք Պօղոսի խօսքը, «Մարդիկ պիտի ըլլան անձնասէր, արծաթասէր, ամբարտաւան, հպարտ, հայհոյիչ, ծնողներու անհնազանդ, ապերախտ, անսուրբ, անգութ»:

Մօր մը սէրը սակայն որքա՞ն անհամեմատ պզտիկ եւ ժամանակաւոր է բաղդատմամբ այն սիրոյն որ ակն ու աղբիւրն է տիեզերքի ձգողական զօրութեան: Աստուծոյ սէրը անքննելի եւ անհասանելիօրէն բարձր ու ընդարձակ եւ խորունկ է հանդէպ մարդկութեան: Այս սիրոյն շատ մը փաստերը տեսած ենք եւ դեռ պիտի տեսնենք յաւիտեանականութեան մէջ եւ անոր համար փառք պիտի տանք եւ օրհնաբանենք զԱյն: Աշխարհ իր ականջն ու սիրտը զոցելով, ապերախ-



Ս. ԳՐԱԿԱՆ

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Քաղեց՝ SCOFFIELD էն

Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

ՄԵՐ ՏԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

— — — — —

Յիսուս Քրիստոսի անձը կը լեցնէ ամբողջ Աստուածաշունչը: Իրաւցնէ սուրբ մատեանը իր առաջին էջէն մինչեւ վերջին էջը Յիսուսի յայտնութիւնն է: Շուքերով, ուղղակի կամ անուղղակի անձերու կամ առարկաներու օրինակներով, մարգարէութիւններով, խոստումներով եւ այլն, Յիսուս Քրիստոս կը յայտնուի Ա-

տօրէն Աստուծոյ դէմ կենալով ի՞նչ ահարկու դատապարտութիւն կը դիգէ իր վրայ: Եթէ մօր մը հանդէպ ապերախտ եղող այս երիտասարդը աւելի կը սիրէր թաղուիլ մօրը հետ եւ անխելի ընել իր մէջ անդիմադրելիօրէն սղոքող խղճին ձայնը, ա՛հ, որքա՞ն աւելի ահարկու պիտի ըլլայ վիճակը անոնց որոնք ապերախտութեան դէմ բողոքող ներքին ձայնը, աշխարհի եւ մեղքի մեծաթխոր խառնիճադանճ բազմութեան ձայններուն մէջ խեղդել կ'ուզեն, կամ կը ջանան մեղքին աւելի խոր ցեխերուն մէջ թաղուիլ, խանձելու իրենց սիրտն ու խիղճը եւ անխելի ընելու արդարութեան եւ պատասխանատուութեան կոչերը: Ասոնք չպիտի կրնան յաջողիլ: «Անբարիշտները խաղաղութիւն պիտի չունենան կ'ըսէ իմ Աստուածս»:

Այս տողերը կարգացող սիրելին արդեօք ապերախտ գտնուած է իր մօրը հանդէպ: Թերեւս ժամանակ կայ դեռ իր ըրած անիրաւութիւնը շտկելու, երթալ ներողութիւն խնդրելու իր մօրմէն եւ անոր վիրաւորած խանդակաթ սէրը թարմացնելու: Ա՛հ, ի՞նչ ուրախութեան ժամ պիտի ըլլայ այդ հաշտութեան ժամը: Բայց աւելի՜ մեծ պիտի ըլլայ ուրախութիւնը, երբ մեղաւորը տուն կը դառնայ եւ իրեն ցոյց տրուած սիրոյն հանդէպ իր ապերախտութեան վերջակէտ մը կը դնէ եւ կը հաշտուի երկնաւոր Հօրը հետ Տէր Յիսուսի ղեկավարութեամբ: «Աստուծոյ Որդւոյն Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ ամէն մեղքէ կը սրբէ»:

գամէն մինչեւ Մաղաքեայ եւ մինչեւ Յայտնութեան զբքին վերջին համարը:

Այս անգամ սերտենք Քրիստոսի օրինակներէն քանի մը հատը: Նախ սա ըսենք թէ օրինակը Աստուծոյ ծրագիրը մըն է ճշմարտութիւն մը բացատրելու համար: Օրինակը կրնայ ըլլալ «անձ մը» Հոով. Ե. 14, «ղէպ մը» Ա. Կոր. Ժ. 11, «բան մը» Եբր. Ժ. 20, «կանոնադրութիւն մը» Եբր. Թ. 1-11, «Արարողութիւն մը» Ա. Կոր. Ե. 7:

Օրինակները տրուած են ամենէն շատ Ս. Գիրքի առաջին հինգ զիրքերուն մէջ: Օրինակին կատարումը ընդհանրապէս՝ Նոր Կտակարանին մէջ կը գտնուի:

Անձ ըլլալով իբր Քրիստոսի օրինակը շատ բնական կերպով նախ Ադամը առնելու ենք (Ծննդ. Ե. 1, Ա. Կոր. ԺԵ. 22, 45-47 եւն):

Ադամ իբր մարդկային ցեղին մարմնաւոր, բնական զուխը (Ղուկ. Գ. 38) իբր հակապատկեր օրինակ մըն է Քրիստոսի, որ նոր ստեղծագործութեան զուխը եղաւ (Բ. Կոր. Ե. 17): Լայն իմաստով ա.ս. հակապատկերը հետեւեալն է.—

Ադամ — Մեղք — Մահ

Քրիստոս — Արդարութիւն — Կեանք

Ադամ իր կործանումին մէջ քաշեց տարաւ հին ստեղծագործութիւնը (Հոով. Ը. 19-22) որուն ինքը տէր եւ զուխ եղած էր:

Քրիստոս Աստուծոյ հետ քարոյական միութեան եւ յաւիտենական կեանքի մէջ կը մըտցնէ նոր ստեղծագործութիւնը որուն Տէրը եւ Գլուխը ինքն է (Եփես. Ա. 22, 23), նոյնիսկ կենդանային եւ իշխական ստեղծագործութիւնն ալ՝ որ մարդուն պատճառաւ անիծուած էր (Ծննդ. Գ. 17) Քրիստոսով պիտի ազատուի (Եսա. ԺԱ. 6-9, Հոով. Ը. 19-22):

Աբէլ (Ծննդ. Գ. 2, 4): Աբէլ Յիսուսը կը պատկերացնէ երկու կերպով. — իր կեանքով եւ իր գաւառակներով սլատարագներով: Իր կեանքով նա կը ներկայացնէ հոգեւոր մարդը (մարմնաւոր Կայէնին հակասաբար՝ եւ իր զառնուկներու պարագաներով նա կը պատկերացնէ Աստուծոյ Գառը որ Աշխարհի մեղքը կը վերցնէ Յովհ. Ա. 29, Եսայ. ԾԳ. 7, Ղուկ. ԻԳ. 9, Մատթ. ԻԶ. 53, 54): Հոս նա որպէս հակապատկեր կը կենայ Կայէնի, վասնզի Կայէն առանց արիւնի եւ իր ձեռքին աշխատութեան պտուղներէն ընծայ բերաւ Տէրոջը, իսկ Աբէլ ոչխարներուն առջիններէն (զառնուկներ) պատարագելով յայտարարեց մարդկութեան բոլոր գալիք դարերուն սա ճշմարտութիւնը թէ «արին չթափուած թողութիւն չըլ-

լար» (եւ ոչ իսկ իրեն, արդար Աբէլի) (Եբր. Թ. 22, ԺԱ. 4):

Աբէլ իր նախանձուտ, բարկացուտ, ատող եւ չար եղբոր Կայէնի ձեռքով սպաննուելովն կըրնայ ներկայացնել Յիսուսի մահուան նախապատկերը: Յիսուս ալ սպաննուեցաւ նախանձուտ եւ չար եղբայրներուն (հրեայ ազգին) կողմէ, բայց Աբէլի արինը երբեք Յիսուսի տրեան օրինակը չէ: Մահուանդ քաւչական տեսակէտով Աբէլի արինը հակասական օրինակ մ'է նոյնիսկ Քրիստոսի արեան, վասնզի մինչ Աբէլի արինին ձայնը գետնէն Աստուծոյ կը բողոքէ, (Ծննդ. Գ. 10), Յիսուսի արինը խաղաղութեան (Կող. Ա. 20), հաշտութեան (Եփես. Բ. 16), փրկութեան (Ա. Պետ. Ա. 18, 19) սրսկուելու աբինն է, որ Աբէլի արինէն աւելի աղէկ կը խօսի (Եբր. ԺԲ. 24):

Խառնակ եւ անոր հետ առնչութիւն ունեցող անձեր եւ դէպքեր Քրիստոսի եւ Անոր եկեղեցիին պատկերացնող օրինակներ են: Նախ Ծննդ. ԻԲ. զլուսն մէջ ուր պատկերացումը հետեւեալ կերպով է.—

1. Իսահակ Քրիստոսի օրինակը «մինչեւ մահուան հնազանդ» Փիլ. Բ. 5-8:

2. Աբրահամ Հօրը օրինակը, «որ իր որդւոյն չխնայեց, հապա մեր ամենուն համար մատնեց զանիկա» Յովհ. Գ. 16, Հոով. Ը. 32:

3. Խոյը օրինակ Քրիստոսի Անոր մեր տեղը իբր փոխանորդական զոհ պատուարագուելուն Եբր. Ժ. 5-10:

4. Իսահակ օրինակ յարութեան Եբր. ԺԱ. 17-19:

Ծննդ. ԻԳ. զլուսն ալ ամբողջովին օրինակներով լեցուն զլուսն մ'է:

1. Աբրահամ օրինակ է «թագաւոր մարդու մը որ իր որդւոյն համար հարսնիք ըրաւ» Մատթ. ԻԲ. 2:

2. Ծառան օրինակն է Ս. Հոգիին որ «ինքն իր վրայով չխօսիր», հապա փեսային պատկանած բաները կը ներկայացնէ հարսին զայն շահելու համար Յովհ. ԺԶ. 43-45:

3. Ռեբեկա օրինակն է եկեղեցիին, դուրս կանչուած կոյսին՝ Քրիստոսի կինը ըլլալու Բ. Կոր. ԺԱ. 2:

4. Իսահակ օրինակ: Փեսային, Քրիստոսի՝ Հոս բաղդատութիւնը շատ ուշադրաւ է. ա. Ինչպէս Ռեբեկա սիրեց Իսահակը, առանց դեռ զայն տեսած ըլլալու, միայն ծառային վկայութեամբ եւ փեսային զրկած զարդերով զարդարուեցաւ, նոյնպէս ալ եկեղեցին. Ա. Պետ. Ա. 8, Եփես. Ա. 6, Հոով. Ը. 14: Բ. Ինչպէս Իսահակ իր տունէն դուրս



ՂՈՎՏԻ ԿԻՆԸ

Միտքերնիդ բերէք Ղովտի կինը:

Ղուկ. ԺԷ. 33

Մեր Տէրը Իր երկրորդ զալստեան վրայ խօսած ատեն Նոյի օրերը, Սողոմոն կործանումը եւ Ղովտի կինը կը յիշեցնէ եւ կ'ուզէ որ դասեր առնենք եւ խրատուինք անոնցմով: Այս պա-

գնաց հարսը ընդունելու համար, նոյնպէս ալ Քրիստոս Ծննդ. ԻԴ. 63, Ա. Թեա. Դ. 14-16:

Մեկքիսեղեկի եւ Ահարոն.— Այս երկու անունները միասին ներկայացնելուս պատճառը այն է որ երկուքն ալ նոյն տեսակէտէ՝ բայց տարբեր պատկերներով Քրիստոսի օրինակներն են, Մեկքիսեղեկ օրինակն է Քրիստոսի իբր թագաւոր քահանայապետ, իսկ Ահարոն միայն իբր քահանայապետ: Քրիստոս Քահանայապետ է Ահարոնի պաշտօնին պէս բայց Մեկքիսեղեկի կարգին պէս: Իբր մարդոց մէջէն, մարդոց համար Աստուծոյ կողմը միջնորդութեան եւ բարեխօսութեան կեցող քահանայապետ (Եբր. Ե. 1): Ահարոն Քրիստոսի օրինակը կրնայ սեպուիլ, բայց Ահարոնական քահանայապետութիւնը շարունակաբար կ'ընդհատուէր մահուամբ: Ասոր համար Քրիստոս ոչ թէ Ահարոնի կարգին պէս, հապա Մեկքիսեղեկի կարգին պէս անտեսանելի, յաւիտենական Քահանայապետ է Եբր. 2. 20, Է. 23, 24, Եսայ. ԺԱ. 4-9, Եբր. Է. 2: Բայց ոչ միայն այսքան, հապա Մեկքիսեղեկ կը ներկայացնէ Քրիստոս թագաւոր-Քահանայապետը՝ Ասոր յարութենէն յետոյ՝ վասնզի Մեկքիսեղեկ խաչի զոհին յիշատակները եղող հաց ու գինի հանեց (Ծննդ. ԺԴ. 18, Ղուկ. ԻԲ. 19, 20, Ա. Կոր. ԺԱ. 24):

Գալով Ահարոնի քահանայապետ օծուելու պարագային՝ անոր Քրիստոսի օրինակ մ'ըլլալը աւ: մանրամասնութեամբն ալ ուշապրաւ է որ մինչ քահանաները զոհերուն պատարագութիւն յետոյ կ'օծուէին՝ Ահարոն զոհերէն առաջ եւ (միայն ինքը) օծման իւղող կ'օծուէր (Ղեւտ. Ը. 12) այսպէս ցուցնելով թէ Քրիստոս Ս. Հոգին ընդունելու համար նախ քաւչական արիւնի եւ պատարագի չէր կարօտեր:

«...ՈՐԴԻՆ ՈՐ ՅԱԻՏԵԱՆ ԿՍՏՈՐԵԱՆ Է»:
(Եբր. Է. 28)

տեսութեամբ Ղովտի կնկան վրայ դարձնենք մեր ուշադրութիւնը:

Այս կնկան անունը տրուած չէ մեզի: Ասկէ դաս մը չե՞նք կրնար առնել արդեօք: Տէրը Իրենները իրենց անուններով կը ճանչնայ Եսայ. ԽԳ. 1: Աբրահամի կնկան անունը տրուած է, սակայն Ղովտի կնկան անունը չունինք: Աղքատ Ղազարոսի անունը գիտենք, սակայն մեծատունին անունը չենք գիտեր: Շատեր կը փափաքին աշխարհի վրայ պահել եւ յաւերժացնել իրենց անունը եւ յիշատակը: Սակայն Տէրը պիտի կործանէ, եւ ինչ որ Տէրը կը կործանէ, մարդ կարող չէ պահելու եւ յաւերժացնելու:

Ա.— Ղովտի կնկան պատեհութիւնները: Անոր վայելած պատեհութիւնները պէտք է մեր ուշադրութիւնը գրաւեն: Անիկա արդար մարդու մը կինն էր, անանկ մարդու մը որ «անօրէններուն անառակ վարմունքէն ձանձրացեր էր» Բ. Պետ. Բ. 7: Արդար մարդու մը կինը ըլլալ, անոր հետ ապրիլ, փոքր բան չէ: Աստուծոյ մէկ շնորհքն է: Նորէն, Ղովտին կինը կը ճանչնար Աբրահամը, որ իր ազգականն էր, Աստուծոյ շնորհալի ծառան եւ հաւատքի հերոսը: Անոր Աստուծոյ հետ ունեցած յարաբերութիւններուն, Անկէ առած պատգամներուն մասին գիտէր: Իր աչքերով տեսած էր այն օրհնեալ մարդը որ Աստուծոյ հետ կը տեսակցէր ու կը խօսակցէր: Ղովտի կինը ասանկ մէկու մը հետ ապրեցաւ: Ինչ մեծ առանձնաշնորհում է անանկ մէկուն հետ ապրիլ: Նորէն, անիկա իր տան մէջ հիւրընկալած էր Տէրոջ հըրեշտակները, երկնային այցելուները: Այո, դէժ առ դէժ տեսաւ զանոնք եւ խօսքեր լսեց անոնց բերնէն: Անիկա իր աչքերովը տեսաւ այն զարմանալի հրաշքը զոր կատարեցին այս երկնային, մաքուր եւ սուրբ հիւրերը: Ինչպիսի տառապանքներ թողած ըլլալու էին ասոնք Ղովտի կնկան վրայ: Սակայն ցաւալի է նկատել թէ ան չօգտուեցաւ անոնցմէ:

Լիւնային եւ սակայն հող ունեցող վայրերու վրայ լարձր եւ հսկայ ծառեր կ'աճին երբեմն, սակայն բարեբեր եւ ջրարբի դաշտերու վրայ հազիւ մէկ թիզ բարձրութեամբ մացառներ կ'երեւնան միայն: Շնորհաց աշխարհին մէջ ալ այսպէս է յաճախ: Քանանացի կին մը որ շատ քիչ լսած էր Յիսուսի վրայով, եւ տեսած իսկ չէր զԱյն, մեծ գովասանքի արժանացաւ իր մեծ հաւատքին համար: Սակայն Յուդա որ երեք երկար տարիներ Անոր հետ մնաց, իր աչքերով տեսաւ Անոր անմահ կեանքը եւ զարմանալի գործերը, սրտով անհաւատ մըն էր: Հոռութ

Մովսրացիին այնքան ազդուած էր իր կեսորոշ նոյեմբի կեանքէն որ ամէն ինչ ձգելով անոր հետեւեցաւ: Սակայն Ղովտի կինը չօգտուեցաւ իր թանկագին պատեհութիւններէն:

Սերելի ընթերցող, մենք արդեօք կ'օգտուինք Աստուծոյ մեզի պարգեւած պատեհութիւններէն: Ի՞նչ թանկագին առանձնաշնորհումներ վայելած ենք ու կը վայելենք տակաւին, գործնք նախախնամութիւնը մեզի պարգեւած է:

Բ.— Ղովտի կնկան մեղքը: Այսպէս կը կարգանք, «Ու ետեւէն անոր կինը ետին նայեցաւ ու ազի արձան եղաւ» Ծննդ. ԺԹ. 26: Անիկա «ետին նայեցաւ», այսքան միայն: Պարզ նայիլ մը: Խօսք մը, բառ մը, գործ մը, շարժում մը չըկայ: Եւս օձին մտիկ ըրաւ, անոր հնազանդեցաւ, ձեռքը երկնցնելով պտուղէն առաւ, կերաւ եւ Ադամին ալ տուաւ: Հոն շարժում, գործ, խօսք կայ: Սակայն Տիկին Ղովտը միայն նայեցաւ: Դէպի Սողոմ երթալու փորձ մը չըրաւ, զանգատի խօսք մը չխօսեցաւ: Փոքր յանցանք մը, ջնջին բան մը, վայրկեանական ակնարկ մը, երեւութապէս: Սակայն պատիժը շուտով հասաւ:

Ովկէանոսներու վրայ նաւարկողներ կ'ըսեն թէ երբեմն հոն, ջուրերէն վեր, անշուքարեկիօրէն վեր կը ցցուին ժայռերու զլուխներ: Ասոնք թէ եւ անշունք ընդհանրութ մը կը ներկայացնեն ջուրերուն վրայ, սակայն ծովուն մակերեսէն վար եթէ քննես, ի՞նչ ահագին ապառաժներ կան հոն: Նաւապետները որչափ կը վախնան այդ տեղերէն եւ որչափ կ'զգուշանան: Ղովտի կնկան մեղքը այսպէս էր, շատ ջնջին բան մը դուրսէն նայելով, սակայն մեծ յանցանք մը երբ սրտին վիճակը քննուի:

Նախ, որոշ պատուէրի մը անհնազանդ եղաւ ան: «Անձդ ազատելու համար փախիր ու ետիդ մի նայիր» ըսուած էր իրենց: Ծննդ. ԺԹ. 17: Այս Աստուածային պատուէրին առաջին մասը կատարեց իսկ երկրորդին անհնազանդ եղաւ: Որքա՛ն շատեր Աստուծոյ պատուէրներուն մէկ մասը կը կատարեն ու միւս մասը զանց կ'ընեն ու անհնազանդ կ'ըլլան:

Երկրորդ, Աստուծոյ ամենատես ըլլալը մոռցաւ: Համարը այսպէս կ'ըսէ, «Ու ետեւէն անոր կինը ետին նայեցաւ»: Ինչո՞ւ ետեւէն կը նայի: Յայտնի է որ ետ մնաց որ զաղտուկ նայի: Եթէ անոնց առջեւն ըլլար, պիտի զգուշանար, քանզի պիտի տեսնուէր: Այսպէս եթէ ետեւէն նայէր, մէկը չպիտի տեսնէր, եւ յետոյ երբ հարցուէր, կրնար ուրանալ: Ան չզիտցաւ թէ Աստուծոյ հետ

խաղալ չըլլար, Անոր ամենատես աչքերէն բան մը չկրնար վրիպիլ:

Երրորդ, մեծ յանդուութիւն մը ըրած ըլլալու էր անշուշտ: Հաւանաբար սապէս տրամաբանեց, ես ո՞վ եմ, Ղովտի կինը: Այս հրեշտակները ես հիւրընկալեցի, ես կերակրեցի: Անշուշտ անոնք յարգանք ունին ինծի հանդէպ: Ես անծանօթ մէկը չեմ, նշանաւոր մէկն եմ, ուստի իմ դիրքս եւ մատուցած ծառայութիւնս նկատի կ'առնեն եւ գթաարտութիւն կը ցուցնեն ինծի: Այսպէս խորհեցաւ եւ անհնազանդ եղաւ:

Չորրորդ, անոնց ամենէն վեր եւ ամենէն ցաւալին այն էր որ անոր սիրտը կապուած էր Սողոմի: Ինք Սողոմէ դուրս ելաւ, սակայն Սողոմ իր սրտէն դուրս ելած չէր: Ի՞նչ պէտք ունէր նայելու, եթէ անոր սիրտը կապուած չըլլար ամբարիշտ քաղաքին որ մեղքի մէջ թաղուած էր: Ո՛հ, Սողոմասէր Տիկին Ղովտ, ո՞վ գիտէ ինչ նեղութիւններ տուած էիր քու ամուսինիդ: Թերեւս դուն էիր պատճառը որ «Ղովտ իր վրանը Սողոմի քով բացաւ» եւ կամաց կամաց անոր մօտեցաւ, անոր մէջ մտաւ վերջապէս եւ հոն բնակեցաւ, գիտնալով թէ «Սողոմի մարդիկը խիստ չար ու մեղաւոր էին Տէրոջը առջեւ» Ծննդ. ԺԳ. 12-13:

Ո՛հ, Սողոմացիներուն նորաձեւութիւնները, շքեղ եւ փայլուն հագուածքը եւ քալուածքը, անոնց հանդէսները, անոնց պարահանդէսները, անոնց երեկոյթները, շատ հրապուրած էին քեզ, Տիկին Ղովտ եւ սիրտդ չէր կրնար զատուիլ անոնցմէ: Դուն կը քնանայիր երբ քու աղջիկներդ կը սորվէին անոնց մեղքերը: Դուն չզգուշացուցիր, չխրատեցիր, միտքդ չբերիր թէ Աստուած վրէժխնդիր է այս գարշելի մեղքերուն համար: Ինքզինքդ շատ հանգիստ կ'զգայիր հոն եւ եթէ քեզի թողուէր անոնց մէջ մնալ եւ անոնց հետ ապրիլ, պիտի նախընտրէիր: Սակայն ատիկա չտրուեցաւ, ուստի գոնէ հեռուէն, աչքերդ դէպի այն կողմ դարձնելով անգամ մըն ալ նայեցաք հոն:

Գ.— Ղովտի կնկան պատիժը: Նախ պատիժը մահ եղաւ: Հիւանդութիւն, բորոտութիւն կամ երկարատեւ ցաւ չէր: Աստուած երբեմն անձերը ցաւերով կը պատժէ: Գէնգի այդպէս պատժուեցաւ: Սողոմացիները կուրուքեամբ պատժուեցան երբ Ղովտի տունը պաշարած էին, սակայն Ղովտի կինը մահուամբ պատժուեցաւ: Մէկը կ'ըսէ, «Այն որ յուսով կը մեղանչէ, անյոյս պիտի կորնչի»: Երկրորդ պատիժը վայրկեանական եւ յանկարծահաւ էր: Իրեն միջոց եւ պատեհութիւն

չտրուեցաւ իր մեղքը խոստովանելու, ներում խնդրելու եւ դարձի գալու: Այն որ Հարաշար կը գործածէ իրեն շնորհուած թանկագին պատեհութիւնները, օր մը բոլորովին պիտի զրկուի անոնցմէ: Այսպէս եղաւ Անանիայի եւ Սափիրայի վախճանը: Երբորդ, պատիժը արտակարգ ու զարհուրելի եղաւ: Ամէն մարդ կը մեռնի, անոր վերայ կուլան, զանիկա յարգանքով կը տանին ու կը թաղեն: Սակայն Ղովտին կինը այդպէս չեղաւ, չէին կրնար տանիլ եւ թաղել զայն, քանզի մարդ չէր, հապա աղի արձան: Չէին կրնար անոր քով գալ, քանզի կենալու չէին: Անոնք փախչելու էին, չէին կրնար անոր դառնալ եւ անոր նայիլ, վասնզի իրենց հետեւ նայելու չէին: Չորրորդ, անիկա Աստուծոյ արդար բարկութեան իբրեւ օրինակ կեցաւ հոն: Ղովտ եւ իր աղջիկները անցան զացին, սակայն աղի արձանը կը կենար հոն: Անշուշտ բազում ճամբորդներ սոսկումով նայեցան անոր: չէին գործող, հուսկ յետոյ մարդոց ոտքին կոխան եղաւ ան, վասնզի անձրեւները եւ տեղատարափները երբ իջան անոր վրայ, արձանը կամաց կամաց փշրուեցաւ, հալեցաւ: Անիկա մարմարիոնէ չէր, հապա աղէ: Անիկա հետզհետէ հողի ու ցեխի հետ խառնուեցաւ եւ մարդիկ կոխկոտեցին զայն: Աստուած հողին եւ ցեխին մէջ նետեց անոր փառքը: Ո՛հ, արդարեւ «սարսափելի բան է կենդանի Աստուծոյ ձեռքը իյնալը» Եբր. Ժ. 31: «Եթէ աղը իր համը կորսնցնէ, ինք ինչով պիտի աղուի, անկէ ետեւ բանի մը չի գար, միայն թէ դուրս ձգուելու եւ մարդոց ոտքին տակ կոխուելու» Մատթ. Ե. 13: Այսպէս եղաւ Ղովտի կինը:

Դ. — Գասեր Ղովտի կնոջմէն: Ղովտի կինը իբրեւ ազդանշան մը կը կենայ կեանքի ճամբորդութեան շաւիղին վրայ: Ան կը խօսի բոլոր մարդկութեան, մանաւանդ բոլոր եկեղեցիներուն եւ եկեղեցւոյ անդամ եղողներուն: Մեր Տէրը մասնաւոր ուշադրութիւն կը հրաւիրէ, որպէսզի դառնանք եւ անոր նայինք եւ խրատուինք: Առաջին դասը որ պէտք է առնենք, այս է անշուշտ. — ձեռնարկը չսիրել: «Մի սիրէք աշխարհը եւ ինչ որ աշխարհի մէջ է» Ա. Յովհ. Բ. 15: Որքան անթիւ են անոնք դորս կործանած է այս աշխարհը: Որքան շատ են անոնք որ թէեւ Բերիստոսը կը դաւանին, սակայն չեն բաժնուած եւ չեն կրնար բաժնուիլ աշխարհէ: Աշխարհ բնաւ չէ եղած այնքան հրապուրիչ եւ այնքան խաբեբայ որքան է հիմա, այս 20րդ դարուն մէջ:

Սակայն ի՞նչպէս կրնանք աշխարհսիրութենէ ազատիլ: Անոր միակ դարմանն է քրիստոսը սիրել, Անոր սիրահարուիլ: Ուստի մօտ երթանք Անոր: Աւելի յարաբերինք Անոր հետ, աւելի ժամանակ տանք ծունկի վրայ դալու, աղօթելու եւ Աստուծոյ խօսքը կարդալու:

Երկրորդ դասը որ պէտք է առնենք, փոքր մեղքերէն զգուշանալ է: Ղովտին կինը մեծ մեղք մը չըրաւ: Անիկա միայն նայեցաւ: Անհամեստ խօսք մը չխօսեցաւ: Չար գործ մը չըրաւ: Երեսը դարձնել եւ մէկ անգամ նայիլ. ջնջին մի բան չէ՞ ասիկա: Դրսէն նայելով մեծ յանցանք մը չէր ասիկա, սակայն մեծ մեղք էր վերէն նայելով: Շատ մը մեղքեր որ փոքր կ'անուանենք, մեծ են Տէրոջը առջեւ: Ո՛հ, զգուշանանք:

Երրորդ դասը որ պէտք է սորվինք, այս է թէ Աստուծոյ արդար դատաստանին օրը կը մօտենայ: Յիսուս կուգայ եւ ջրհեղեղի եւ Սողոմոնի պատիժներուն նման բաներ պիտի կրկնուին: Յիսուսի գալստեան օրը Ղովտի կնկան նման եղողներուն համար սարսափելի օր մը պիտի ըլլայ: Շատեր անոր պէս պիտի պատժուին, քանզի Տէրը կուգայ կրակով վրէժ առնելու անոնցմէ որոնք զԱյն չեն սիրեր եւ Աւետարանին չեն հնազանդիր: Յիմար կոյսեր հարսնիքի տունէն դուրս մնալնուն համար պիտի ահաբեկին եւ դառնապէս պիտի լան: Անոնք որ աստուածապաշտութեան կերպարանքը ունին բայց անոր զօրութիւնը կ'ուրանան, պիտի արթննան իրենց վիճակը տեսնելու, երբ շատ ուշ է: Անոնք որ իրենց մէկ ձեռքը Աստուծոյ կ'երկնցնեն եւ սակայն միւսը աշխարհի տուած են, անոնք որ եկեղեցիներու մէջ են, սակայն երեսներն աշխարհի դարձուցած, քարի եւ արձանի պէս պիտի ըլլան իրենց վախէն եւ սոսկումէն, երբ մեծ Դատաւորը կուգայ:

Եթէ Յիսուս այսօր գայ, դուն ի՞նչ պիտի ըլլաս, սիրելի ընթերցող, լսէ մեր Տէրոջ խրատը եւ դուն ալ

ՂՈՎՏԻՆ ԿԻՆԸ ՄԻՏՔԻ ԲԵՐ:

ՄԻՆԱՍ Յ. ՊՕԶՕԳԼԵԱՆ

Հալէպ

Սուրիա



ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԵԾ ԴԵՄՔԵՐ ՈՒ ԴԵՊՔԵՐ

ՀԱՅՈՑ ՀԱՒԱՏՈՑ ԸՆՏԱՆԻՔԷՆ

.....

Գ. ՀԱՆԱԾԱՆՔԸ ՄԻՋՈՑ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ
ՏԱՐԱԾՄԱՆ.—

Հալածանքները փոխանակ տկարացնելու եւ շնչելու քրիստոնէութիւնը, աւելի նպաստեցին անոր տարածմանը մեր հայրենիքին մէջ: Տերտուղիանոս հայրապետը ըսած է, «Մարտիրոսներու արիւնը սերմն է եկեղեցւոյ»: Այդ խօսքին ճշմարտութիւնը լիապէս ապացուցուած է Հայաստանի մէջ: Վերոյիշեալ եւ ուրիշ բազմաթիւ սուրբերու արցունքով ոռոգուեցաւ մեր հողը եւ անոնց արեան նուիրակն կաթիլները ինկան իբր սերմեր, որոնք ծիւ արձակեցին եւ պտուղ արտադրեցին՝ «որը հարիւր, որը վաթսուն եւ ուրը երեսուն»: Մէկ նահատակ հաւատացեալի տեղ՝ Աստուծոյ Հոգին յաճախ ծնաւ տասը եւ աւելի նորեր: Երբեմն նոյնիսկ դահիճներ եւ մարտիրոսները չարչարող զինուորներ ու պաշտօնեաներ զինաթափ կ'ըլլային եւ ինքզինքնին կը նուիրէին Քրիստոսի:

Այսպէսով որչափ հալածուեցաւ քրիստոնէութիւնը, այնչափ աւելի տարածուեցաւ մեր սիրելի հայրենիքին մէջ: Երբորդ դարու վերջին կիսուն, — Գրիգոր Լուսաւորիչի գործունէութենէն առաջ — ան արդէն պատկառելի ու կազմակերպուած ոյժ մըն էր մեր երկրին մէջ եւ հաւանաբար ունէր նոյնիսկ եպիսկոպոս մը, որուն հովանաւորութեան տակ կը գտնուէին Հայաստանի բոլոր քրիստոնէաները: Ասոր ապացոյց եւս.—

Նախ՝ Յովհաննէս Վարդ. Մաղարթեցիին կողմէն 649ին գրուած «Արտագու Յիշատակարան»ին վկայութիւնը, որու համաձայն Սուրբ Գրիգոր Պարթեւի ժամանակ քրիստոնէութիւն կար, նոյնպէս նաեւ եկեղեցիի տեսուչ՝ Թաքուստ եւ խաւարչուտ տեղի մէջ:

Երկրորդ՝ եկեղեցական պատմիչ Եւսեբիոս (Յ. Տ. 500ի ատենները) կը վկայէ թէ Աղեքսանդրիոյ Դիոնեսիոս հայրապետը (248-264) նամակ մը գրած է այն քրիստոնէաներուն «որոնք Հայաստանի մէջ էին, որոնց եպիսկոպոս էր այն ատեն Մերութան»: Այս նամակով յորդորած է Դիոնեսիոս հայ եկեղեցին՝ դարձեալ ներս ընդունիլ այն քրիստոնէաները, որոնք հալածանաց ա-

տեն տկարանալով հաւատուրաց եղած են, բայց ետքը նորէն ապաշխարած:

Երբորդ՝ քրիստոնէութեան Հայաստանի մէջ տարածուած ըլլալուն ապացոյց են նաեւ Տրդատի զոյգ հրովարտակները՝ գրուած 287ին: Առաջինով կը հրամայէ սէզ արքան՝ քրիստոնէաները «բերել արքունի դուռը, կապուած ոտքերով, կապուած ձեռքերով եւ կապուած պարանոցով» եւ անոնց ստացուածքը զանոնք մատնողներուն բաժնել: Իսկ երկրորդով մահապարտ կը հռչակուին նոյնիսկ անոնք, որոնք քրիստոնէաները մատնացոյց չեն ընել:

Այս ամէնը կը ցուցնեն թէ երկուք ու կէս դարերու ընթացքին մեծ յառաջդիմութիւն ըրած էր քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ, ունէր իր «տեսուչը» կամ «եպիսկոպոսը», կը ճանչցուէր արտասահմանի, մինչեւ Եգիպտոսի մէջ եւ հետեւող էր քրիստոնէական մաքուր հաւատոյ, — դժուարաւ ներս կ'առնէր նոյնիսկ այն ուրացողները, որոնք իրենց մեղքին համար կ'ապաշխարէին:

Հեթանոսութիւնն ալ կը զգար թէ հայ ժողովուրդին կարեւոր մէկ մասին մէջ խախտած էին իր հիմերը եւ իր տեղը սկսած էր բռնել ուրիշ ոյժ մը: Տրդատի օրերուն յարուցուած մեծածաւալ եւ խիստ հալածանքը վերջին փորձ մըն էր անոր յաղթական ընթացքին առջեւ թուաբար կանգնելու նպատակաւ: Բայց ի զո՛ւր: Սուկաւէտ լեւրան վրայ նահատակուող 364 վկաներէն մին Բսած է, «Պիտի գայ մեզմէ աւելի զօրաւոր մշակ մը, անիկա պիտի կործանէ Բաղաւանի բազինը»: Քիչ ետք պիտի կատարուէր այս մարգարէական խօսքը եւ հեթանոսութեան ամենաթունոգ պաշտպանը Տրդատ իր ձեռքերովն իսկ պիտի զնէր Հայաստանի առաջին եկեղեցւոյն հիմերը: Բայց այդ մասը յաջորդիւ: Առ այժմ միայն այսքանը միտք պահենք:

Հալածական քրիստոնէութիւնը Հպարտուեցաւ: Ընդհակառակն փորեց հեթանոսութեան հիմերը, քանզի քրիստոնէաները ունէին անխախտ հաւատք իրենց յարուցեալ Փրկչին ամենակարողութեան ու սիրոյն վրայ, անկեղծ ու ջերմ սէր մէկմէկու հանդէպ եւ այնքան կենդանի յոյս որ անոնց համար անտեսանելի փառաւորեալ հանդերձեալը աւելի իրական էր քան թէ տեսանելի աշխարհը իր բոլոր վախերով ու հրապոյրներով: Ուստի անոնք ուրախութեամբ կը տոկային զրկանքներու եւ մարտիրոսական մահուան: Ասիկա նոր ոյժ մըն էր հեթանոս աշխարհին համար. ուստի չզիմացաւ, պարտուեցաւ,

ՀՆՏԱՆԵԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ

.....

Այլ աւելի յաղթող կ'ըլլանք Անով որ մեզ սիրեց:
Հոով. Ը. 37

Հիմա նկատի պիտի առնենք քրիստոնեային աշխարհի մէջ տուած վկայութեան հսկանակ եղող ուժերը:

Խաւարը լոյսին դէմ կը պատերազմի: Երբ հոգիներուն Արեւը երեւցաւ երկրի վրայ, խաւարը Անոր դէմ ցցուեցաւ: Խաւարը կը ցցուի նաեւ անոնց դիմաց որ Անոր լուսով կը փայլին: Տէրը մեզի ըսած է, «Զիս ատեցին», «...ամենուն ատելի պիտի ըլլաք»:

Ուրիշ՝ կուգայ այս ատելութիւնը: Ահա Լոյսին պատասխանը: Ամէն ով որ չար կը գործէ, անիկա Լոյսը կ'ատէ և լոյսին քով չգար որպէսզի իր գործերը Հայնդիմանունին» (Յովհ. Գ. 20): Այս ատելութիւնը մեզի կը ցուցնէ թէ գիշերուան եւ ցորեկուան, չարին եւ բարին, Սատանայի եւ Աստուծոյ միջեւ անդունդ մը կայ, հակառակ բաւ լոյսականութիւն չունեցողներուն ջանքերուն, որոնք կ'ուզեն պղծութիւնը եւ սրբութիւնը իրարու խառնել:

Մեր օրերուն ցորեկուան դէմ գիշերուան հակառակութիւնը կը կրկնապատկուի, որովհետեւ գիշերը այլեւս շատ ատեն չունի, ինչու որ Յիսուս զալու վրայ է: Առանց թուական որոշելու գելու, կրնանք ըսել թէ Ան կը մօտենայ եւ գիշերը զայս գիտէ:

Մենք հոս պիտի խօսինք երկու կերպ ահաւոր հակառակութեանց մասին, որոնք են հալածանքները եւ աշխարհի հրապոյրները:

4. Հալածանքները. — Երբեմն կատաղի, չա-

.....

հակառակ անոր որ նիւթական բոլոր գէնքերն ու առաւելութիւնները իր կողմն էին:

Ներկայիս տիրող հեթանոսական խաւարին ալ յաղթելու համար քրիստոնեան երթալու է նոյն ճամբայէն: Պարտի ունենալ անյողզող հաւատ, վառվռուն յոյս, անձնուէր սէր առ Աստուած ու ընկերը, վկայելու քաջութիւն եւ իր Փրկչին սիրտը զրկանք ու տառապանք կրելու յօժարամտութիւն:

Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

փառանց անգթութեամբ, իսկ երբեմն ալ հնամտութեամբ — բանբասանք, ծաղրանք, անտարբերութիւն, ցրտութիւն: Որքա՛ն ընդդիմութեան ցոյցեր ունի խաւարը լոյսին դէմ: Որքաններ մարտիրոսացած են եւ որքա՛ն կեանքեր կան որ մարտիրոսութեանց երկար շարք մը կը ներկայացնեն:

Բայց «այս ամէն բաներուն մէջ ալ աւելի յաղթող» կրնանք ըլլալ:

Ի՞նչպէս: «Անով որ մեզ սիրեց»: Իր անդրդուելի եւ պաշտպանող սիրոյն վստահութիւնը մեզ կը քաջալերէ նոյնիսկ ամենէն մութ ժամերուն եւ զօրութիւն կուտայ ամէն բան ուրախութեամբ կրելու: Մեր ապաստանաբանն է Իր սէրը, ոչ թէ մեր առնական որոշումները, ոչ թէ մեր անձնական կորովը, այլ Իր սէրը: Ան որ գիտէ եւ կ'զգայ թէ Քրիստոսէ կը սիրուի, անպարտելի է:

2. Հրապոյրները. — Աշխարհը՝ այսինքն ըսել կ'ուզեմ սատանայական զօրութիւնը որ մարդկութեան մէջ կը գործէ, կը ջանայ մեզ ստութեան հրապուրել: Սատանան ստութեան հայրն է:

ա. Աշխարհ մեզի կը խոստանայ ուրախութիւններ, որոնք սուտ, խաբուսիկ եւ վատառողջ են: Մենք չենք դատապարտեր այն զբօսանքները որոնք բնական են, այլ «աշխարհի պղծութիւնները», որոնք ռեւէ ատենէ աւելի հրապուրիչ ձեւերու տակ կը ներկայանան. Անոր ալ կարելի է դիմադրել, ոչ միայն չարէն ետ քաշուել, այլ զայն ատել, ոչ միայն ապականութենէ փախչել, այլ սրբութիւնը ի գործ դնել: Ի՞նչպէս: Սիրելով զԱյն որ մեզ կը սիրէ: Տեղ մը գրուած է, «Բու դէմքդ դիտելու ատեն չարը իր հրապուրը կը կորսնցնէ, պատրանքը կը ցնդի, աշխարհը կ'անհետի»: Այն սիրաւոր որ զԱյն քիչ կը սիրէ, սպառնալիքի տակ է: Սիրով լեցուած սիրտը մեղքին տեղ չունի:

բ. Աշխարհ մեզի սխալ վարդապետութիւններ կը մատուցանէ, որոնք կը ներկայանան որպէս ճշմարտութեան արդի արտայայտութիւնը: Որքանի՞ր ինքզինքնին մարգարէ կը ներկայացնեն, որոնց ամէնն ալ ստախօսներ են: Որոնք կը յայտարարեն յարգանք, սքանչացում Յիսուս մարդուն համար, բայց կ'ատեն եւ կը նախատեն Յիսուս Աստուածը: Արդիականութիւնը իր զանազան ձեւերով անարգանք է որ կը ծածկէ փառաբանութեան ետեւ, անարգանք Փրկիչ Աստուծոյ Որդւոյն հանդէպ: Անոնք կը միաբանին Յիսուս Քրիստոսի աստուածութեան եւ Իր փրկարար գործին դէմ:



ՀՈՍԱՆՔԷՆ ՉՏԱՐՈՒԻԼ

Գրիգոր եւ Սուրէն հօրեղբորորդիներ էին, եւ յաճախ միասին կ'անցնէին իրենց ժամանակը: Անոնք միեւնոյն դպրոցը չէին յաճախեր, ոչ ալ իրարու տարեկից էին: Գրիգոր 15 տարեկան էր, իսկ Սուրէն հազիւ 11ը լրացուցած էր: Բայց անոնք այն աստիճան սիրով կապուած էին իրարու որ տեսնողները երկու եղբայրներ կը կարծէին: Անոնց բնակավայրը փոքրիկ գիւղ մըն էր, մեծ կեդրոններէ բաւական հեռու, սակայն երկուքն ալ գիշերօթիկ դպրոց կ'երթային Ք. քաղաքը:

Զատիկի առթիւ 15 օրուայ համար գիւղը եկած էին, իրենց ծնողներուն քով անցնելու արձակուրդը: Գրիգորին ծնողքը հաւատացեալ էին եւ իրենց կեանքի օրինակով եւ ընտանեկան լուրջ դաստիարակութեան մը շնորհիւ կըրցած էին իրենց մէկ հատիկ զաւակը իր ճամբան ողջ սած ատենն իսկ կըրթել Աստուծոյ վախին մէջ: Գիւղը կիրականօրեայ դպրոց չկար. Գրիգորի կիրականօրեայ դպրոցը իր հօրենական տունը եղած էր. ան ուսած էր նախ իր մօր ծունկերուն վըրայ եւ տանը փափուկ մթնոլորտին մէջ ուղղուած էին իր առաջին քայլերը, Աստուծոյ առատ խօսքին լոյսին տակ:

Գրիգոր ալ իր կարգին մեծ ազդեցութիւն գործած էր Սուրէնի վրայ, եւ որովհետեւ իրենց կանուխ հասակէն միշտ անբաժան էին, Սուրէն ամէն կիրակի կ'երթար Գրիգորին տունը, կը

Բայց հոս ալ կրկին սիրով կարելի է յաղթել: Քրիստոսի սիրոյն տեսիլը, խաչին տեսիլը, այս բոլոր հերետիկոսութեանց հանդէպ զգուանք երեւան կը բերէ: Մեզ Փրկիչէն հեռացնելու համար Սատանային թափած ջանքերուն կը պատասխանենք աւելի բուռն սիրով մը առ Այն: Այդ խաբող պատգամներուն կը հակադրենք յաւիտենական ճշմարտութեան պատգամը: Ուրեմն ով Աւետարանի ծառաներ, լուռ կենալու ժամանակը չէ:

Թարգ. Ի. Յ. ԱՅՐԱՀԱՄԵԱՆ

Սէնթ Էթիէն

նստէր նոյն սեղանին շուրջ եւ Գրիգորին մօրմէն կամ հօրմէն կը սորվէր նոյն Ս. Գիրքէն, նոյն ճշմարտութիւնները, երբ տակաւին գիշերօթիկ չէին գացած: Իսկ այն քաղաքը ուր կ'ուսանէին, անոնք շատ յաճախ կը տեսակցէին եւ Գրիգոր մեծ եղբօր պէս կը հսկէր Սուրէնին վրայ:

Այս վերջինը շատ անգամ կը գանգատէր Գրիգորին թէ իր դպրոցին մէջ շատ քիչ էին անոնք որ իրենց սորվածներու մասին զաղափար ունէին, թէ մեծ էր թիւը անոնց որ Աստուծոյ, Քրիստոսի, երկինքի եւ յաւիտենական կեանքի վրայով քիչ բան գիտէին եւ եթէ լսած ալ էին, ծաղրանքով կը խօսէին անոնց մասին եւ թէ ինք անոնց ծիծաղին առարկան էր, որովհետեւ լսած էին որ աղօթք կ'ընէր:

Գրիգորին սիրտը կը ցաւէր երբ կը լսէր այս բոլորը եւ վախճալով որ Սուրէնը իր հաւատքէն սայթաքի ու մոլորի, չէր դադարէր զայն զգուշացնելէ եւ անոր համար աղօթելէ:

— Մանաւանդ, կը կրկնէր Գրիգոր, մանաւանդ նայէ որ զիտցածդ ծածկուած չպահես, մի մոռնար որ դուն պարտականութիւն ունիս անոնց սորվեցնելու. «Ով որ զիս մարդոց առջեւ դաւանի...»: Պէտք ունի՞մ քեզի յիշեցնելու Տէր Յիսուսի խօսքը:

— Այո, բայց անգամ մը եկուր եւ փորձէ դաւանիլ, քեզ ծաղր ու ծանակ կ'ընեն, տգէտի եւ սին-զլուխ պատուի տեղ կը դնեն:

— Կը կարծես թէ մեր դպրոցին մէջ ամէն ալ հաւատացեալ Աստուծոյ զաւակն'ըր են, բարեկամս, ինչ որ քեզի կ'ընեն, ինծի ալ կ'ընեն, դպրոցները ամէն տեղ նոյնն են, բայց իմ բոլոր ուսուցիչներս ալ գիտեն որ ես Փրկիչը ընդունած եմ. յաճախ անոնց հետ խօսակցութիւններ կ'ունենամ հոգեւոր նիւթերու շուրջ: Անոնցմէ շատերը անհաւատ են թերեւս, բայց զիս շատ կը սիրեն, որովհետեւ նախ՝ դասերս շատ լաւ կը սիրեն, որովհետեւ նախ՝ դասերս շատ լաւ կը ջանամ սորվածներս ու դաւանածներս իմ ապրելակերպովս գործադրել: Դու ալ նայէ որ արատ չբերես քու հաւատքիդ:

Այդ օր երկուքն ալ որոշած էին իրենց մէկ հօրաքրոջ այցելել Զատիկի առթիւ: Այս վերջինը բաւական հեռու գիւղ մը կը բնակէր: Ոտքով երթալ կարելի չէր: Ուստի ըստ սովորութեան, իր բաքանչիւրը իր հօրը աւանակը պատրաստեց (երկրագործ ըլլալուն հէ կամ ձի կը պահէին այդ գիւղը): Ծամբու կէսին գետակ մը կար, վճիտ ջուրով, ուրկէ պէտք էր անցնէին հօրա-

քրոջ երթալու համար: Վրան կամուրջ շինուած չէր. որովհետեւ այդ կողմերը շատ լայնօրէն տարածուած էր ջուրը եւ ճիշդ այդ պատճառով ալ ծանծաղ էր, հազիւ գարշապարը կը ծածկէր եւ մարդիկ քալելով կ'անցնէին ընդհանրապէս: Երբ գետակը երեւցաւ, Սուրէն աղաղակեց.

— Նայէ, Գրիգոր, ջուրերը ինչպէ՛ս պղտորած են:

— Անձրեւներէն յորդած ըլլալու է, պատասխանեց վերջինս, բայց մեծ բան մը չէ, բարեբախտաբար էշերը կան:

Գետակը հասնելուն երկու տղաքը տեսան որ ջուրերը ընդարձակ տարածութեան մը վրայէն իրենց պղտոր ալիքները թաւալազլոր կը վազցընեն: Պահ մը վարանումով կանգ առնելէ վերջ, Գրիգոր յարեց.

— Խորունկ ըլլալու չէ, մտնենք: Մտքիդ մէջ աղօթէ:

Աւանակները զգուշութեամբ մտան ջուրը: Արդարեւ շատ խոր չէր, հազիւ անասուններուն ծունկերը կը ծածկէին. բայց հեղեղները զօրացուցեր էին անոր հոսանքը:

— Ջուրին մի նայիր, հրամայեց Գրիգոր. ճիշդ քովէս գնա: Նոյն ատեն ան աչքէն չէր հեռացներ Սուրէնը:

Երբ գետին կէսը հասան, Գրիգոր նկատեց որ հօրեղբորորդին սկսաւ մէկ կողմ հակիլ իշուն վրայ: Սոսկումով նկատեց որ եթէ մէկ վայրկեան կորսնցնէր, ան հաւասարակշռութիւնը կորսնցուցած պիտի իյնար գետը ու քշէր հոսանքէն: Ակնթարթի մը մէջ երկնցուց ձեռքը ու կըռուփի զօրաւոր հարուած մը տուաւ Սուրէնի կզակին տակ, բարձրաձայն պօռալով.

— Դէպի վեր նայէ՛...

Սուրէն որ անգիտակցաբար սկսած էր հոսանքը դիտել, եւ որուն աչքերը «կը վազէին» արդէն, անմիջապէս սթափեցաւ, շիտկեց ինքզինքը իշուն վրայ ու ապահով անցան միւս ափը: Գրիգորի հարուածը ազատած էր զինքը սողոյդ մահէ:

— Շնորհակալ եմ, բարեկամս, ըսաւ Սուրէն, երբ գետեղբորը հասան, կեանքս դուն ապահովեցիր:

— Կերած հարուածիդ համար շնորհակալութիւն կը յայտնես, պատասխանեց Գրիգոր ժղպտելով: Սուրէն խնդաց:

— Կը տեսնե՞ս, սիրելիս, վերսկսաւ Գրիգոր լրջութեամբ մի քանի վայրկեան վերջ, կեանքի մէջ ալ անանկ է շատ անգամ: Մեր շուրջը հոսանքը շատ զօրաւոր է: Աստուծոյ զաւակները

մեծ զգուշութիւն ընելու են որ անոր չնային, եթէ ոչ մէջը կ'իյնան ու անկէ կը քշուին դէպի յաւիտենական կորուստ: Ասոր համար մէկ միջոց կայ — վեր նայիլ, Ասոր՝ որ մեր քայլերը կը դիտէ ու զանոնք իր ճամբուն մէջ առաջնորդել դիտէ, եւ կամ դէպի առաջ նայիլ Յիսուսի, «մեր հաւատքին առաջնորդին ու կատարողին»: Եթէ հաւատացեալները թերանան ասոր մէջ, այն ատեն Տէրը երբեմն իր փրկարար հարուածը կ'իջեցնէ անոնց վրայ, ոչ թէ պատժելու, այլ զանոնք սթափեցնելու համար: Նայէ որ դուն այդ հարուածին պէտք չունենաս քու դպրոցիդ մէջ. հոսանքէն չտարուիս:

Յ. Գ.

Շար. խմբագրականի

հեղինակը, իր կեանքին մէջ զանազան փուլերէ անցաւ: Մեծահարուստ կալուածատիրոջ մը զաւակն էր երբ 16 տարիքին մէջ կորսնցուց հաւատքն առ Աստուած եւ մխրճեցաւ աշխարհի հանցանքներուն տիղմին մինչեւ խորերը: Սակայն քիչ յետոյ իր ներքին պարապութեան եւ սրտի ամալութեան առջեւ պժգանք մը ունեցաւ: Ընկերական գործունէութեամբ ջանաց այդ պարապը լեցնել, բայց անկարելի եղաւ: Սպայ մը եղաւ եւ մեծ գործունէութիւն ցոյց տուաւ ծարական բանակին մէջ հայրենիքին համար. ի գո՛ւր: Գեղարուեստը ձեռք առաւ եւ շուտով անոր գերի եղաւ, բայց որպէս ունայնութիւն մէկդի ձգեց: Քանի մը խաղաղ տարիներ ունեցաւ ամուսնական կեանքի մէջ, բայց դարձեալ շուտով զգուցեալ անկէ ալ, զայն բարոյական վերելքին որպէս արգելք պիտակելով: Կը վարդապետէ գոհաբերութեան եւ ժուժկալութեան կեանքը, կը կոռի կառավարութեան եւ եկեղեցիին դէմ, գեղարուեստի եւ գիտութեան դէմ եւ կ'անարգուի մօտաւորէն եւ հեռուէն ինչ որ սիրով ալ կը կրէ, բայց ճշմարիտ խաղաղութեան չհասնիր: Մինչեւ որ վերջին փորձ մը կ'ընէ. կը ձյէ տուն եւ ստացուածք, կին եւ սիրելիք եւ որպէս աղքատ մուրացիկ մը, իր կեանքը կը քաշքշէ ուրիշներուն վրայ ծանրութիւն չըլլալու համար: Վերջապէս 82 տարիքին մէջ մահը կը հասնի իր վրայ կայարանի պահապանի մը տան առջեւ, սիրող ձեռքեր կ'ուզեն օգնել իրեն, բայց ինք կը մերժէ զանոնք ունեցած բոլոր ուժովը աղաղակելով. «Աշխարհի վրայ միլիոններ կան տանջուող, ինչո՞ւ գուք միայն ինձմով կ'զրա-

զիք»։ Մինչդեռ իրականին մէջ ամենէն շատ իր անձով զբաղողը ինքն էր։ Մաքսիմ Կօրքի կ'ըսէ, «Թօլսթօն ամենէն շատ զբաղեցնողն եւ զինքը մոլորեցնողը Աստուծոյ դոյութեան խորհուրդն է, երբեմն միայն ջղազրգիւ ներքին պայքար մըն է բանի մը դէմ՝ որ իր ներսիզին կ'զգայ եւ ասոր ալ բուն պատճառը ներքին մարդուն հպարտութիւնն է, որ կը ծառանայ հոն լուսաբանել ուղող Աստուծոյ դէմ եւ ամէն օր իր անձը կը չարչարէ պահպանողական զիքը զրաւելով Անոր դէմ»։ «Չենք ուզեր որ Ատիկա մեր վրայ թագաւորութիւն ընէ»։ Թօլսթոյի մեծ

միտքը եւ կեանքը պարզ շո՛ւք մըն է միայն իրականին մէջ։ Ցաւալի՜....



«Նայէ, ես այսօր կեանքը ու բարին, մահը ու չարը քու առջեւդ դրի... ուրեմն կեանքը ընտրէ որպէսզի ապրիս դուն ու քու սերունդդ»։ Այս է Տէրոջը յորդորը ժամանակի ոգին կրող եւ անոր փարոյ եւ Քրիստոսը մերժող մարդոց եւ ազգաց։ «Թէ որ հնազարդիք երկրին բարիքը պիտի ուսէք»։ «Թէեւ արծիւի պէս բարձրանաս, եւ քու բոյնդ աստղերուն մէջ զնես, քեզ անկէ պիտի իջեցնեմ, կ'ըսէ Տէրը» Աբդ. 4։ Ուրեմն աշխարհի զուր թող չտքնի։ Թօլսթոյներ եւ անոնց նմաններ թող չջանան իրենց եւ իրենց հետեւողներուն համար սերիշ տեղ եւ տարբեր կերպերով խաղաղութիւն փնտռել։ Կեանքը Աստուծոյ Որդւոյն Յիսուս Քրիստոսի մէջ է եւ Անով է։ Անիկա պէտք է թագաւորէ, Անիկա պէտք է որ ըլլայ մարդկութեան եւ տիեզերքի պաշտամունքի կեդրոնն ու առարկան։ Այն ատեն միայն փրկութիւն կայ մարդկութեան։

Ղուկասու ԺԷ. 27 կԸ ցուցնէ թէ զԱյն ատող-նիւրուն վախճանը ահարկու է։ Աստուած մաշող կրակ է։ Բայց Աստուած սէր է։ Դարձեք, դարձեք, վասնզի ինչո՞ւ կ'որսուիք, ով Իսրայէլի տոհմը»։ Յ. Ն. Ղ.

ԵՐԳ ՄԵԾԵՐՈՒ ԶԱՄԱՐ ԵՒ ՊԱՏԱՆԵԱՅ ՅԱՐՄԱՐ

ՍԻՐՏ ՄՐՏԻ ՄԻԱՅԱԾ

Ազատ. Թարգ. Գերմ. Յ. Ն. Ղ.



- 1 Սիրտ սրտի պինդ միացած մենք
Հուսոյ կեանքն իր մէջ փրճառենք,
Մեր սիրոյ ջերմ բոց լուսեղէն
Իրմով թող միշտ հրկիզին։
Ան գլուխ եւ մենք անդամներ,
Ան լոյսն է եւ մենք ցոլքեր,
Ան է մեր Տէրն, մենք եղբայրներ,
Մենք Անորն ենք, Ան է մեր։
- 2 Օն եկէք, ո՛վ որդիք շնորհաց,
Նորոգել ձեր ուխտն շիջած,
Ուխտեցէք ձեր Յաղթականին
Սէր, հաւատք, սրտով խորին։
Ձեր շղթան սիրոյ չէ՞ տոկուն,
Թող ամէն ոք աննրկուն
Շուտ ծընրադիր Տէրն պաղատի
Որ ընէ զերթ պողպատի։

- 3 Ալէլուիա, ի՛նչ բարձրութիւն,
Թանգ շնորհաց ի՛նչ խորութիւն,
Որ մենք դիտենք մեզ Սիրողին
Մինչեւ խորերն սուրբ սըրտին։
Ո՞վ կարէ Անկէ զատել մեզ,
Սուրբ սէրէն, վեհ կեանքէն հեզ,
Ոչ բարձրութիւն, ոչ խորքեր ցած
Եւ ոչ այլ մի արարած։
- 4 Տէր, մեզի Դուն պատուիրեցիր
Սիրել եղբարք ցան ու ցիր,
Օն, ուրեմն մեր այս սրտերն սառ
Հողովդ Դուն կենդանարար
Հըրկիզէ, տո՛ւր սիրոյ բոցեր
Որ երթանք երկրէ երկիր
Փնտռել ազգաց մէջ անխըտիր
Եւ գտնել եղբարք ընտիր։

ԱՅԱԿԵՏ. ԿԻՐԱԿԵՆՈՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖԲԱՆՍԱՅԻ ՄԷՋ

Շարանամիջի աղօթածողով ներս. մասին հարցնել տեղին վրայ):

ՄԱՐՍԷՅԷ—Հովիւ' (վ.եր.) 8. Ն. Ղարաբան
7 Rue Papère

Կիր. ժամը 10 քարղածողով, 2 r. Philippe de
11.30ին աղօթածողով, Girard

Կիր. դասեր մանկանց ժամը 8. 30ին Ն ին տեղը
Սէն Ժուլիէն, Լէզ Օլիվ, Ս. Ժէրոմ Ս. Ան-
ժուան եկեղեցու աղօթատեղիին մէջ

Ս.Միքր, Ալք մանաւար քնակարաններու մէջ
Շարանամիջի աղօթածողով ներ

Դ.շր. ժամը 14ին Սէն Ժուլիէն

Դ.շր. 20ին քաղաքը 2 r. Philippe de Girard

Ե.շր. ժամը 2ին Ս. Միքր

Ե.շր. ժամը 19ին Սէն Ժէրոմ

Ուր. ժամը 2ին Սէն Սեբաստիան

ՍԷՆ ԼՈՒԻ.—Քարղիչ Պատ. վանքան Սանկեան
Chapelle Evang. Armen. Bd. Escalon St. Louis

Կիր. ժամը 8 30ին մանկանց կիր. դաս:
10. 30ին Ս. գրական ուսումնա
15 30 ին քարղածողով:

ՍԷՆՑ ՄԱՐԿՐԻԹ.—
Կիր. ժամը 14ին քարղածողով

ՍԷՆ ԼՈՒԻ— Քարղիչ Պատ. Ս. Պագգալեան
11 Impasse des Muriers St. Luis

Կիր. ժամը 9ին կիր. դպրոց

ժ. 10ին աղօթածողով, ժ. 14.30ին քարղ

Դ.շր. ժամը 20ին Աւետ. ժողով

Ուր. ժամը 20ին սերտողութիւն

ԼԱ ՍԻՑԻԱ.— Կիր. ժամը 9.30ին աղօթածողով
15 ին քարղածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը
.....

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ' վ.եր. Ա. Փափազեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս
10. 15 քարղածողով

18. 30 աղօթածողով

ՍԷՆ ՓԻԷԹ.—
Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:

16. 30 ին քարղածողով եւ
աղօթածողով

ՄՕՆԹԷԼԻՄԱՐ.—
Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց

14ին քարղ եւ աղօթածողով:
.....

ՎԱԼԱՆՍ.— Հովիւ Բրոֆ. Գ. Գ. Խայկեան
2 r. du Colombier Valence (Drôme)

Կիր. ժամը 13ին քարղածողով Ֆրանս.
եկեղեցիին մէջ

ՌՕՄԱՆ.—
Կիր. քարղածողով:

ԼԻՕՆ—Հովիւ' վ.եր. Ժ. Պարսոմեան,
18, Rue du Dr. Rebatel

Կիր. ժամը 9. 45ին քարղածողով
23 Rue le Royer

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդներու եւ երիտասարդու-
հիւներու ժողով ամառն երկրորդ եւ չոր-
րորդ կիրակներուն, նոյն տեղը:

ՏԷՍԻՆ.—
Կիր. ժամը 13. 45ին քարղածողով,

15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ
Կիր. ժամը 10ին քարղ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—
Կիր. ժամը 15ին քարղածողով

Rue Lafayette.

ՓՕՆ ՏԷ ՇԷՐԻԻ.—
Կիր. քարղածողով եւ աղօթածողով

(15 օրը անգամ մը):

ՍԷՆԹ ԷՐԻԷՆ—Քարղիչ Պատ. Ի. Արաքամեան
60 Rue Richelandière

Կիր. ժամը 10. 30ին քարղածողով
51 Rue de la République

17ին աղօթածողով

Արմէ տիւ Սալիւի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—
Կիր. ժամը 14ին քարղածողով

Mairieի մէջ, Justice de la Paix սրահը
.....

ԲԱՐԻՋ— Հովիւ' Պատ. Զ. Բ. Պատարեան,
10 bis Villa de la Gare, Vanves (Seine)

Կիր. ժամը 10 30ին քարղածողով
11 Rue Jean Bart Ա յարկ Met. Rennes

Ամառն Ա. կիրակին ժամը 16. ին Ե. Ք. Ը. քա-
նախօռնին: Ամառն Գ. կիր. ժ. 16ին Ս. Ք. Ը.

37 Rue Tournefort Paris 5 Metro Mouhe

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով

ժամը 10ին կիրակնօրեայ դաս

59 Ave. du Bas Meudon Ile St Germain

Issy les Moulineaux


ԱԼՖՐՎԻԷ.— Քարղիչ Պատ. Մ. Վէքիլեան
22ter Rue de Vitry Alfortville

Կիր. ժամը 9ին կիր. դպրոց

Կիր. ժամը 10ին պաշտամունք

Rue des Brochets, Alfortville

Երկու կիր. անգամ մը 7.30ին երիտ. խառն ժողով



ՏՈՒԱՅԹ Լ. ՄՈՒՏԻ

Մ Օ Տ Օ Ր Է Ն